2019, ՀՈՒՆԻՍ Ա, ԹԻՎ 11 (535)

Տիրոջդ խաչը պաշտպան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

29 մայիսի **Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի պատվիրակությանը**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի նախագահ տիկին Մարտին-ժիլ Վասալի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Ֆրանսիայի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ, «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության՝ Ֆրանսիայի գրասենյակի նախագահ պրն Ռոբերտ Ազիլազյանի: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան պրն Ժոնաթան Լաքոտը:

Պատվիրակությունը Հայաստան էր ժամանել «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության հիմնադրման 30-ամյակին նվիրված միջոցառումների առիթով: Վերջինիս աջակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գործում է բարեգործական ատամնաբուժարան՝ Էջմիածին քաղաքի եւ հարակից շրջանների կարիքավոր անձանց եւ մանուկների համար:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի եւ ՀՀ պետական կառույցների միջեւ առկա սերտ փոխգործակցությանը: Վեհափառ Հայրապետը ուրախությամբ հաստատեց, որ «Բարձունք 5165» կազմակերպության կողմից Հայաստանում իրականացվող բարեգործական ծրագրերը նպաստում են հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունների առավել զորացմանը՝ այդ առիթով իր գնահատանքը հայտնելով տիկ. Վասալին, որի ազնիվ ջանքերի շնորհիվ նաեւ ֆրանսահայ մարդասիրական կազմակերպությունը շարունակում է իր օգտակար ծառայությունը բերել հայ ժողովրդի զավակներին:

Նորին Սրբությունը մասնավոր իր գնահատանքը փոխանցեց տիար Ռոբերտ Ազիլազյանին՝ ֆրանսահայ համայնքի կյանքի զարգացման ու զորացման գործում ներդրած ջանքերի

համար:

Իր հերթին տիկ. Մարտին-ժիլ Վասալը վերհիշեց, որ վերջին անգամ Հայաստան է այցելել 2016 թվականին՝ երկու երկրների միջեւ սոցիալական, տնտեսական եւ մշակութային հարաբերությունների զարգացման եւ ամրապնդման նպատակով, ապա անդրադարձ կատարեց Հայաստան իր հերթական այցի օրակարգին, մասնավորապես՝ դպրոցականների համար առողջապահության տարբեր ոլորտների վերաբերյալ կանխարգելման ծրագրին:

Ամենայն Հայոց Հայրապետը, ողջունելով նախաձեռնությունը, հույս հայտնեց, որ այն կնպաստի պատանիների առողջ աճին: Վերջում Նորին Սրբությունը Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի պատվիրակությանը մաղթեց արգասավոր գործունեություն:

2 հունիսի **ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանին**

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ տիար Սեդրակյանը անդրադարձան Հայաստանում, Արցախում ու Սփյուռքի հայ համայնքներում տեղ գտած զարգացումներին: Առանձնակի ուշադրություն դարձվեց Հայոց Եկեղեցու եւ տարբեր ազգային հաստատությունների կողմից ձեռնարկվող նախաձեռնություններին, սոցիալական, կրթական եւ զարգացման շարունակվող ծրագրերին: Մասնավոր քննարկման առարկա դարձան Մայր հայրենիքի զարգացման ներկա փուլում Սփյուռքի ներուժի արդյունավետ օգտագործմանն ուղղված գաղափարները:

Անդրադառնալով աշխարհասփյուռ հայության կյանքում Եկեղեցու առաքելությունն առավել աշխուժացնելու եւ հզորացնելու ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ Հայոց Հայրապետն ընդգծեց հոգեւորականների պատրաստության ու վերապատրաստության կարեւորությունը: Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի համայնքներում հոգեւոր հովիվների պակասը լրացնելու առումով Նորին Սրբությունն իր գնահատանքը փոխանցեց, ի դեմս տիար Սեդրակյանի, Հայկական բարեգործական ընդհանուր միությանը՝ հոգեւոր կրթօջախների գործունեությանն աջակցելու, ինչպես նաեւ եկեղեցականների հետագա կրթությունն արտերկրի համալսարաններում ապահովելու համար:

Զրույցի ընթացքում հատկապես կարեւորվեց միածնաէջ Մայր տաճարի ամրակայման եւ հիմնանորոգության աշխատանքներին աշխարհասփյուռ հայության, ազգային ու համայնքային հաստատությունների մասնակցությունը՝ իբրեւ միասնականության խորհրդանիշ: Մտքեր փոխանակվեցին Մայր տաճարի հոգատարության եւ անխաթար պահպանման նվիրական գործում ազգային-եկեղեցական կյանքին իրենց մշտական զորակցությունը ցուցաբերող բարերար հայորդիների, ինչպես նաեւ Հայոց Եկեղեցու յուրաքանչյուր հավատավոր զավակի աջակցությունն ապահովելու վերաբերյալ:

Հայաստանում Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող բազմատեսակ ծրագրերի շարքում առանձնացվեց դպրոցահասակ երեխաների ու պատանիների համար Հայաստանի տարբեր քաղաքներում հայորդյաց տների գործունեությունը: Ներկայումս ՀԲԸՄ-ի աջակցությամբ իրականացվում է Երեւանում Մալաթիայի հայորդյաց տան հիմնանորոգության ծրագիրը:

ՀԲԸՄ-ի նախագահը, Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղեկացնելով տարբեր համայնքներում իր հանդիպումների՝ ներառյալ օրերս Լիբանան կատարած այցելության մասին, շնորհակալություն հայտնեց Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքի համայնքներում հայապահպանությանը եւ հայկական մշակույթի պահպանությանն ուղղված ՀԲԸՄ-ի բոլոր ձեռնարկներին Հայոց Եկեղեցու սպասավորների մշտական աջակցության համար:

Տիար Սեդրակյանը Վեհափառ Հայրապետի ուշադրությանը ներկայացրեց նաեւ Արցախում մեկնարկող մի քանի նոր ծրագրերի մանրամասները:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ՀԲԸՄ-ի նախագահի Պերճ Սեդրակյանին՝ բարձր գնահատելով Մայր Աթոռին ու Հայոց Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերին միության կողմից ցուցաբերվող շարունակական զորակցությունը:

8 հունիսի **Համայն Բելառուսի Պատրիարքական էկզարխ միտրոպոլիտ Պավելին**

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Համայն Բելառուսի Պատրիարքական Էկզարխ, Մինսկի եւ Զասլավի միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Պավելի հետ: Միտրոպոլիտ Պավելը Հայաստան է ժամանել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով եւ, առաջիկա օրերին լինելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հյուրը, կծանոթանա Հայոց Եկեղեցու կյանքին, կրթական ու սոցիալական ծրագրերին, ինչպես նաեւ կայցելի տարբեր վանքեր ու պատմական վայրեր:

Հանդիպմանը ներկա էր Բելառուսի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Ղեւոնդյանը:

Ուրախություն հայտնելով Մինսկի եւ Զասլավի միտրոպոլիտ Պավելի Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցի առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ ընդգծեց, որ այն ոչ միայն անձնական բարեկամական ու

ջերմ կապերի վերահաստատումն է, այլեւ միտված է նպաստելու Եկեղեցիների միջեւ եղբայրական հարաբերությունների եւ գործակցության առավել զորացմանը: Նորին Սրբությունը վերհիշեց Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի ասպիրանտուրայում միտրոպոլիտի եւ իր ուսումնառության տարիները, հոգեւոր ծառայության անցած ուղին:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սկիզբը՝ էջ 1

Վեհափառ Հայրապետը կարեւորեց նման այցելությունները՝ անդրադառնալով նաեւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի հետ ունեցած պարբերական հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվում են Եկեղեցիների առջեւ ծառացած խնդիրներն ու մարտահրավերները եւ դրանց հաղթահարման ուղիները:

Իր հերթին Համայն Բելառուսի Պատրիարքական Էկզարխ Պավել միտրոպոլիտը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝ ջերմ ընդունելության համար, հաստատեց, որ երկար ժամանակ է, ինչ ցանկանում է այցելել Հայաստան: Միտրոպոլիտը նաեւ նշեց, որ քաջատեղյակ է հայ ժողովրդի եւ Հայոց Եկեղեցու անցած դժվարին ու հերոսական պատմական ուղուն եւ իր ծառայության տարբեր վայրերում մշտապես առնչվել է Հայոց Եկեղեցու կառույցների եւ հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Նորին Սրբազնությունը Հայոց Հովվապետին ներկայացրեց նաեւ Բելառուսում Ուղղափառ Եկեղեցու գործունեությունն ու հոգեւոր կյանքի ներկայիս կացությունը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւս անդրադարձ կատարեց Հայաստանի անկախության հռչակումից հետո Հայոց Եկեղեցու ջանքերին՝ եկեղեցական կառույցների վերականգնման, հոգեւորականների պատրաստության եւ եկեղեցաշինության ոլորտներում: Մասնավորապես խոսվեց միածնեէջ Մայր տաճարի ամրակայման եւ վերանորոգության աշխատանքների մասին:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը հոգեւոր եղբորն ի Քրիստոս մաղթեց արեւշատ կյանքի երկար օրեր եւ արդյունավետ գործունեություն՝ ի պայծառություն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու եւ ի մխիթարություն Բելառուսի հավատավոր ժողովրդի:

9 հունիսի

Ֆրեզնոյի համալսարանի հայագիտության ամբիոնի ուսանողներին

ՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոս ընդունեց Ֆրեզնոյի պետական համալսարանի (ԱՄՆ) հայագիտության ամբիոնի 1–4 կուրսերի մի խումբ ուսանողների՝ ուղեկցությամբ ամբիոնի վարիչ դոկտոր Բարլոու սրկ. Տեր-Մկրտչյանի:

Հանդիպմանը Բարլոու սարկավագը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ համալսարանի ավելի քան քսանհինգ հազար ուսանողից հինգ հարյուրը հայ են, իսկ հայագիտության ամբիոնի դասերին տարեկան մասնակցում է շուրջ հարյուր հիսուն ուսանող: Տեր-Մկրտչյանն ընդգծեց, որ ամեն անգամ, երբ գալիս է Հայաստան, անպայման այցելում

է Մայր Աթոռ, որպեսզի լիցքավորվի ու ներշնչվի եւ այդ նույն ներշնչումը փոխանցի իր ուսանողներին, որ զգան, թե որքան զորեղ է Հայաստանյաց Եկեղեցին եւ ինչպիսի կարեւոր դեր է խաղում հայոց կյանքում:

Այնուհետեւ համալսարանականներին ողջունեց Գարեգին Բ Կաթողիկոսը՝ ամենքին բերելով իր հայրական սերն ու օրհնությունը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Բարլոու Տեր-Մկրտչյանին՝ հայ երիտասարդներին հայրենիքի հետ մշտապես կապելու, նրանց հայկական ոգի, շունչ ու կրթություն փոխանցելու համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը երիտասարդներին պատգամեց լինել ժրաջան եւ ուսումնատենչ, որպեսզի ապագայում, ուր էլ որ բնակվեն, իրենց նվիրյալ ու արդյունավետ ծառայությունը բերեն հայ ժողովրդին ու Հայոց Եկեղեցուն: Վեհափառ Հայրապետը խմբին մաղթեց բարի կեցություն հայրենիքում՝ շրջելու պատմամշակութային տարբեր վայրերում, հիանալու դարավոր սրբավայրերով եւ վայելելու ժողովրդի ջերմությունն ու հյուրընկալ ոգին:

Համբարձման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



ԱՅԻՍԻ 30-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը: Այս տոնին հիշատակվում է նաեւ 1441 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Ս. Էջմիածին փոխադրելու պատմական օրը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ տերունի այս տոնը հռչակվել է նաեւ Սուրբ Էջմիածնի ուխտի օր:

Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ Մայր Աթոռի միաբանությունը Ս. Գայանե վանքում մասնակցեց տոնի առիթով մատուցվող Պատարագի սրբազան արարողությանը, որին ներկա էին նաեւ հայաստանյան թեմերի առաջնորդները, առաջնորդական տեղապահներն ու ուխտավոր բազում հայորդիներ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը, որն իր քարոզում հիմնավոր անդրադարձ կատարեց օրվա խորհրդին: Հիշեցրեց նաեւ, որ այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու պատմական հիշատակությունն է:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսական Աթոռը տեղափոխող հայրերը գիտակցեցին՝ ուր Լուսավորչի տեսիլքով նոր ոտնահետք է հայտնվել Հայաստան երկրում, այնտեղ է նախամեծար Կաթողիկոսական Աթոռի վայրը: Մենք աղոթքի մեջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն անվանում ենք սնիչ եւ դաստիարակիչ Հայաստանյայց բոլոր եկեղեցիների: Էջմիածինը միայն շենք չէ, միայն քարից կառուցված եկեղեցին չէ: Էջմիածինը Քրիստոսի ոտնահետքն է Հայաստան աշխարհում: Էջմիածինը մեր այն սրբությունն է, որը հայ ժողովրդի համար եղել է արարող միտք, բաբախող սիրտ եւ հայ ժողովրդի հավաքական կամքի արտահայտություն»,– փաստեց Շահե ծ. վարդապետը՝ հավելելով, որ Համբարձման տոնի եւ Կաթողիկոսական Աթոռի տեղափոխության այս երկու կարեւորագույն իրադարձությունները բարի լուր են տալիս մեզ, ըստ Տիրոջ խոսքի՝ «Մի վախեցեք, որովհետեւ ես ձեզ հետ եմ մինչեւ աշխարհի վախճանը»:

Վերջում հայր սուրբը հորդորեց հավատավոր ժողովրդին աղոթել եւ կրկին անգամ նորոգել հավատարմությունը Հայր Աստծուն ու շարականագրի խոսքերով ասել՝ «Անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայց»:

Պատարագի ավարտին, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայրապետական մաղթանք, որի ընթացքում հոգեւոր դասն ու ներկա ժողովուրդն աղոթեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու հավերժ պայծառության համար:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ԱՍՏԾՈ ՄԱՐԳԱՐԵՆ



Սկիզբը՝ թիվ 10

ԱՐԴԵՆ իսկ նշեցինք, որ Հերոբովամ Բ արքայի օրոք եւս իսրայելցիները շարունակում են պաշտել ձուլածո հորթերին: Այդ կուռքերից մեկն էլ կանգնեցվում է Բեթելում՝ բարձունքի վրա: Հենց այստեղ է առավել հաճախ գալիս Ամոս մարգարեն եւ համոզում, հորդորում է իսրայելցիներին ետ կանգնել այդ մեծագույն մեղքից, քանզի Աստված դեռեւս տասնաբանյա պատվիրաններով զգուշացրել էր՝ *«Ինձնից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար: Վերեւում՝ երկնքում, ներքեւում՝ երկրի վրա, եւ երկրի խորքի ջրերի մեջ եղած որեւէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես: Չպիտի երկրպագես ու չպիտի պաշտես դրանց…» (Ելք Ի 3–5)*:

Ամոսը մարգարեանում է այն սարսափելի աղետների մասին, որոնք, որպես աստվածային պատիժ, թափվելու էին ոչ միայն Իսրայելի թագավորության, այլ նաեւ Դամասկոսի, Տյուրոսի, Եդոմի, Ամոնի, Մովաբի, Սամարիայի, Հուդայի երկրի վրա, քանզի դրանց ժողովուրդներն Արարչին ճանաչելուց հետո ուրացան Նրան, հեռացան ճշմարիտ հավատքից:

Բեթելի քուրմ Ամասիան մարդ է ուղարկում Հերոբովամ Բ արքայի մոտ եւ հայտնում՝ իբր Ամոսն Իսրայելի թագավորությունում խռովություններ է հարուցում տիրակալի դեմ՝ մարգարեանալով, թե՝ *«…Հերոբովամը սրով պիտի վախճանվի, եւ Իսրայելը գերվելով պիտի գերվի իր երկրից» (Ամ. Է 11)*: Քուրմն այդպիսով ցանկանում էր առաջացնել արքայի զայրույթն ու ատելությունը, սակայն վերջինս, լինելով կռապաշտ, ամենեւին ուշադրություն չէր դարձնում Աստծո մարգարեի խոսքերին եւ զգուշացումներին: Տեսնելով, որ Հերոբովամ Բ-ն չի պատժում Աստծո ծառա Ամոսին, քուրմն ինքն է սկսում հալածել մարգարեին, արգելում է նրան հայտնվել Բեթելում եւ քարոզել իսրայելցիներին: Սակայն մարգարեն՝ ծեծված ու վերքերով պատված, կռապաշտական տոնակատարությունների ժամանակ գալիս է Բեթել եւ Աստծո խոսքն է փոխանցում իսրայելցիներին: Ամասիան այս անգամ փորձում է խորամանկորեն համոզել մարգարեին, որ նա հեռանա Իսրայելի թագավորությունից, գնա Հրեաստան, ապրի եւ մարգարեանա այնտեղ ու այլեւս չքարոզի Բեթելում, որը թագավորի սրբությունն է եւ թագավորության տաճարը: Ամոսը պատասխանում է քուրմին՝ *«Ես ո՛չ մարգարե էի եւ ո՛չ մարգարեի որդի, այլ հովիվ էի եւ թութ էի քաղում. Տերը…. ասաց ինձ՝ «Դո՛ւ գնա եւ մարգարեացի՛ր Իսրայելի իմ ժողովրդի մասին» (Ամ. Է 14–15): Հիշենք, որ Մովսեսն ու Դավիթը եւս հովիվներ էին (հմմտ. Ելք Գ, Ա Թագ. ԺԶ)*:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Ամոս մարգարեի գրքի ոճն ու շարադրանքը: Ուշադրություն են գրավում նրա խոսքի խստությունը եւ քարոզների, պետական մարգարեությունների պատկերավորությունը: Մարգարեն կիրառում է այլաբանություն, փոխաբերություն, հակաճառություն, բառերի զուգորդում, որոնք առավել ընկալելի եւ ազդու են դարձնում իր ասելիքը: Սուրբ Գրքի մեկնության մասնագետները նկատում են, որ Ամոսի մարգարեությունը որոշակիորեն ազդել է հետագա մարգարեների վրա: Այսպես՝ Եսայի մարգարեն (նշենք, որ Աստվածաշնչում նրա գիրքը զետեղված է Ամոսի մարգարեական գրքից առաջ) քարոզչության սկզբնական շրջանում անդրադառնում է Ամոսի խոսքերին, ապա մեկնում, բացատրում է դրանք *(առավել հստակ երեւում է, երբ համեմատում ենք Ամ. Ե 21–24 եւ Ես. Ա 10–17, Ամ. Բ 7, Գ 10 ու Ես. Գ 14–15, Ամ. Դ 1–3 եւ Ես. Գ 16–15, 24–41 եւ այլն)*: Բովանդակային ակնհայտ նմանություն է առկա նաեւ Ամոսի եւ Օսիայի մարգարեական գրքերի միջեւ: Նշենք նաեւ, որ Տոբիթը հարուստների մասին խոսելիս մեջ է բերում Ամոս մարգարեի խոսքերը *(հմմտ. Տոբ. Բ 6)*: Կամ՝ Ամոսի գրքի *«Տերը խոսեց Սիոն լեռից…» (Ա 2)* խոսքերն առկա են նաեւ Հովելի մարգարեությունում՝ *«Տերը Սիոնից կկանչի…» (Գ 16)*:

Նոր Կտակարանում նույնպես առկա են անդրադարձներ Ամոս մարգարեի խոսքերին. օրինակ՝ Ստեփանոս Նախավկան իր ճառում, իսրայելցիների կռապաշտության եւ իրենց հայրերի Աստծուն ուրանալու առնչությամբ, հղում է Ամոսի խոսքերին *(Գործք Է 42–43 հմմտ. Ամ. Ե 25–27)*:

Շարունակությունը՝ էջ 4

Հայոց Հայկական օրացոյցն ու Հայոց Ամանորի տօնը (Նաւասարդ)

ՅԱՅԿԱԿԱՆ օրացոյցը յատուկ ուշադրութեան եւ հետաքրքրութեան առարկայ է եղել հնուց ի վեր, եւ այդ հետաքրքրութիւնը չի նուազել մեր օրերում եւս: Այսօր եւս բազմաթիւ են Հայոց հնագոյն օրացոյցին վերաբերող հարցերը, որոնք կարօտում են պատասխանի: Եւ այդ հարցերի շարքում առաջնային տեղում են Հայոց Հայկեան օրացոյցի սկզբի ու Հայոց հնագոյն գլխաւոր տօնի՝ *Նաւասարդի* դիրքի հարցերը: Ե՞րբ է սկզբնաւորուել Հայոց օրացոյցը, եղե՞լ է արդեօք Հայոց Նաւասարդի՝ Ամանորի տօնը շարժական, թէ՞ այն իր կայուն տեղն է ունեցել արեւադարձային տարուայ մէջ, եւ, եթէ այն եղել է անշարժ, ապա ի՞նչ կերպ է որոշուել դրա օրը, եւ, ի վերջոյ, ամենակարեւորը՝ արեւադարձային տարուայ ո՞ր մասում է այն եղել: Այս հարցերին շատերն են փորձել անդրադառնալ, եւ տարբեր ժամանակներում ստացուել են մէկից աւելի՝ իրարից տարբեր պատասխաններ: Անշուշտ, այդ պատասխանները չէին կարող բոլորն էլ ճիշտ լինել: Ճիշտ լինել կարող էր դրանցից առաւելագոյնը՝ մէկը:

Այսօր էլ կարելի է հանդիպել «հիմնաւորուած» տեսակէտների այն մասին, որ հին Հայոց Նաւասարդի տօնը եղել է գարնանամուտին, աշնանամուտին, ամառուայ կէսին՝ Օգոստոսին, կամ նոյնիսկ՝ ձմեռը: Եւ հետաքրքիր է, որ այս բոլոր պնդումներն էլ ունեն ծանրակշիռ «հիմնաւորումներ»: Դրանք բոլորը մէկ առ մէկ քննելը եւ հերքելը շատ մեծ ծաւալի աշխատանք է, որ այստեղ զանց կառնենք: Դրա փոխարէն նայենք, թէ որտեղից են ծագել այդ իրարամերժ «հիմքերը»:

Նախ մի քանի խօսք հայկական օրացոյցի աւանդական կառուցուածքի մասին: Մեզ հասած հայկական օրացոյցն ունի հետեւեալ ներքին կառուցուածքը: Տարի է համարուել 360 օրերի ամբողջութիւնը: Տարին տրոհուած է եղել 12 ամիսների՝ իւրաքանչիւրը 30 օր տեւողութեամբ: 12 x 30 = 360: Այս 360 օրերից յետոյ դրուել են եւս 5 յաւելեալ օրեր, որ համարուել են տարուց դուրս՝ արարչութեան օրեր: Այս կերպ ամբողջ տարեշրջանը դարձել է 12 x 30 + 5 = 365 օր: Այս 365-օրեայ տարեշրջանը մօտ 1/4 օրով կարճ է բուն արեւադարձային տարուց (365. 24219... օր), եւ ի հետեւանք այս կարճութեան՝ այս հայկական օրացոյցի Տարեմուտը (ինչպէս նաեւ իւրաքանչիւր ամսամուտ, ամսաթիւ) 1506 տարում մէկ լրիւ պտոյտ է կատարել արեւադարձային տարուայ բոլոր օրերով (1506 x 365.2422 = 1507 x 365): Այսինքն՝ հայկական օրացոյցը եղել է շարժական, մօտ չորս տարին մէկ դրա ամսաթուերը փոխել են իրենց դիրքը արեւադարձային տարուայ օրերի նկատմամբ: Բնականաբար, Նաւասարդ ամսի մէկը՝ *Տարեմուտը, եւս եղել է շարժական*:

Սրա հետ մէկտեղ ունենք տուեալներ, համաձայն որոնց հայերն ունեցել են գլխաւոր տօն՝ Նաւասարդը, որ եղել է անշարժ, ունեցել է իր կայուն տեղը արեւադարձային տարուայ մէջ: Նաւասարդը եղել է իրար ագուցուած տօների մի շարք, տօնուել է *բացօթեայ* եւ տեւել է մէկ *շաբաթ*: Այսինքն՝ ունենք մի կողմից շարժական Նաւասարդ ամիսը, միւս կողմից էլ՝ Նաւասարդեան անշարժ տօնը (սրանց անունների նոյնութիւնը յաճախ առիթ է տուել տարբեր թիւրիմացութիւնների):

Մեր մատենագիր աղբիւրները Հայոց օրացոյցի հիմնումը վերագրում են *Հայկ Նահապետին*: Այդ իսկ պատճառով էլ դա կոչում ենք *Հայկեան օրացոյց*:

Արդ անցնենք Նաւասարդի տօնի տարբեր դիրքերի «հիմնաւորումների» քննութեանը:

Առաջինը քննենք Նաւասարդը գարնանամուտին դնելու «հիմնաւորումները»: Սա ամենատարածուած թիւրիմացութիւններից է: Եւ սրա ծագումն էլ պայմանաւորուած է մեր կրօնով: Քրիստոնէութեան ընդունման հետ հայ իրականութեան մէջ մուտք է գործում նաեւ քրիստոնէութեան որդեգրած ժամանակային պատկերացումների համակարգը: Այս համակարգը գալիս էր Հրէից լուսնա-արեգակնային օրացոյցից, որն էլ, իր հերթին, փոխ էր առնուած հին Միջագետքի օրացոյցներից: Միջագետքի որոշ հին օրացոյցներում, իրօք, ունենք տարին գարնանամուտից սկսելու դրուածք: Եւ սա էլ, իր հերթին, յետագայում փոխ է առնուել Հրէից կողմից: Հրէական լուսնա-արեգակնային օրացոյցում յատուկ կարեւորութիւն է ունեցել գարնանամուտը: Դա կապուել է արարչագործութեան հետ եւ այդ կերպ՝ կապուել է նաեւ ամենայն սկիզբի ու մասնաւորաբար՝ տարուայ սկզբի հետ: Ահա այս՝ գարնանամուտ – արարչագործութիւն – սկիզբ – տարեսկիզբ զուգադրումն էլ հայ քրիստոնեայ իրականութեան մէջ հանգեցրել է Նաւասարդը գարնանամուտին դնելու իրողութեանը:

Ինչ վերաբերում է աշնանամուտին, ձմեռնամուտին կամ Յունուարի մէկին Նաւասարդ տօնելու «հիմնաւորումներին», սրանց մասին ընդհանուր նշենք հետեւեալը: Քրիստոնէութեան մուտքից յետոյ, երբ վերանում է հայ քրմական դասը եւ վերափոխւում քրիստոնեայ քահանայութեան, վերանում է նաեւ հին կրօնի տօները (ի մասնաւորի՝ Նաւասարդեան տօնը) իրենց նախնական տեղերում պահպանող համակարգը: Քանի որ այդ տօների տեղերը որոշել-պահպանելը որոշակի գիտելիք եւ հմտութիւններ էր պահանջում, բնականաբար, քրմութեան վերացումից յետոյ այդ տօները մնում են վերահսկողութիւնից դուրս, դառնում են չկարգաւորուող եւ սկսում են դեգերել: Ապա՝ տարբեր ժամանակներում դրանք «հանգրուանում» են նոր կրօնի՝ քրիստոնէութեան բերած տարբեր նոր տօների տեղերում: Ընդ որում, հին եւ նոր տօների զուգադրումները լինում են հիմնականում այնպէս, որ հին տօները հանգրուանում են այն նոր տօների օրերին, որոնք խորհուրդներով մօտիկ կամ նոյնական են իրենց: Ահա այս կերպ Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում Նաւասարդը զուգադրւում է եւրոպական Նոր տարուն՝ Յունուարի մէկին, կամ աշնանամուտին: Նոյն կերպ էլ Նաւասարդեան բազմօրեայ մեծ տօնաշարքի տարբեր տօներ հանգրուանում են քրիստոնէական տարբեր տօների օրերին եւ նոր կրօնի տօներին տալիս իրենց հնաւանդ ծէսերը՝ իբրեւ ժողովրդական սովորութիւններ:

Մի շատ տարածուած թիւրիմացութիւն էլ Նաւասարդը Օգոստոսի 11-ին կապելն է: Սրա «մեղաւորն» էլ Յովհաննէս Սարկաւագ վարդապետն է: Յայտնի է, որ 11–12-րդ դդ. Սարկաւագ վարդապետը հայկական օրացոյցի էական բարեփոխումներ է արել:

Շարունակությունը՝ էջ 4

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

15-րդ դարի բանաստեղծ, նկարիչ, գրիչ, ճարտարապետ եւ հասարակական գործիչ Մկրտիչ Նաղաշը հայ գրականության եւ մշակույթի նշանաւոր գործիչներից մեկն է: Մկրտիչ Նաղաշը ծնվել է Բաղեշ գավառի Պոռ գյուղում, որը նաեւ նրա ժամանակակից Առաքել Բաղիշեցու ծննդավայրն է: Նաղաշի ծննդյան տարեթիվը ստույգ չէ, ընդունված է ասել, որ նա ծնվել է մոտավորապես 1394 կամ 1395 թվականին: Ծննդյան տարեթվի հետ կապված՝ էդվարդ Խոնդկարյանը նշում է, որ 1418 թվականին Նաղաշը եղել է սարկավագ եւ հմուտ՝ ձեռագրեր արտագրելու, պատկերազարդելու մեջ. այնքան զարգացած է եղել, որ կարողացել է բնութագրել իր ժամանակը: Ուրեմն նա բավականին հասուն է եղել. 24–25 տարեկանից ոչ փոքր: Սա հիմք է հանդիսանում նշելու, որ Մկրտիչ Նաղաշը ծնվել է 1393–1394 թվականներին *(Էդ. Խոնդկարյան, Մկրտիչ Նաղաշ, Եր., 1965, էջ 27)*: Մահվան թվականը եւս ստույգ չէ: Մանուկ Աբեղյանը նշում է, որ բանաստեղծը պետք է մահացած լինի 1470–1480 թվականների միջեւ եղած ժամանակահատվածում *(Մանուկ Աբեղյան, Երկեր, հատոր Դ, Եր., 1970, էջ 473)*:

Հիմք ընդունելով այն, որ որոշ հիշատակարաններում նշված է, թե Նաղաշը 1418 թվականին եղել է սարկավագ, ընդունելով, որ նա այդ ժամանակ մոտավորապես 18 տարեկան պետք է լիներ, նրա ծննդյան տարեթիվ կարելի է նշել 1400 թվականը:

Գրաճանաչություն ու տարրական գիտելիքներ ստացել է հոր օգնությամբ, ապա կրթությունը շարունակել է Պոռին մերձակա Սուրբ Անանիա, հետո՝ Սուրբ Գեւորգ վանքերում: Նաղաշն աշակերտել է ժամանակի նշանավոր փիլիսոփա Թովմա Մեծոփեցուն եւ հիշատակարաններից մեկում նշվում է որպես Մեծոփեցու «ձեռնասունին աշակերտ»:

Մկրտիչ Նաղաշը դեռ մանուկ հասակից ցուցաբերում է մեծ սեր եւ ընդունակություններ դեպի արվեստն ու գրականությունը: Ոտանավորներ էր գրում, մատյաններ էր արտագրում եւ նկարազարդում:

Նաղաշի մասին կենսագրական տեղեկությունները թերի են, եւ մենք չգիտենք, թե վերջնական ինչպիսի կրթություն է ստացել նա, թե ուրիշ ինչ գիտնականների է աշակերտել եւ ինչ գիտություններ է ուսումնասիրել: Սակայն, շնորհիվ ժամանակակիցների վկայությունների եւ ուսումնասիրությունների, փոքրիշատե հայտնի է դառնում, որ Նաղաշը եղել է աստվածաբանության մեծ վարպետ, քաջածանոթ է եղել պատմությանը, ժամանակի անվանի գրողների եւ գիտնականների աշխատություններին, տիրապետել է արեւելյան մի քանի լեզուների:

Ժամանակակիցների գնահատմամբ՝ տասնհինգամյա Նաղաշը «կատարեալ ուսմամբ եւ արուեստիւ, իմաստութեամբ եւ վարդապետութեամբ քաջ քարտուղար, անհամեմատ նկարիչ, եւ ամենայն արուեստից ճարտարապետ» *(Էդ. Խոնդկարյան, նշվ. աշխ., էջ 27)* էր: Ահա հենց հրաշալի նկարիչ լինելու համար էլ բանաստեղծն ստացել է Նաղաշ, այսինքն՝ ծաղկող, նախշ անող, նկարիչ, մանրանկարիչ մականունը:

Նաղաշին նկարագրում են իբրեւ շքեղ կերպարանքի տեր, հաջողակ եւ գեղեցկախոս մարդ: Միաժամանակ, նրա գործերից է երեւում, զգայուն, հոգատար եւ առաքինի բարքի տեր անձնավորություն է եղել: Աշխարհիկ կյանքին զուգահեռ՝ նա կարողացել է գովերգել նաեւ հոգեւորը, աստվածայինը, եղել է եպիսկոպոս եւ եկեղեցու վարդապետությանը հավատարիմ հայր:

Նրա նկատմամբ սերն ու վստահությունն այնքան ուժեղ էին, որ ժամանակակիցները նրան անվանում էին երկրորդ Լուսավորիչ:

Նաղաշին հավասարապես սիրում եւ ընդունում էին ոչ միայն հայերը, այլ նաեւ Ամիդի եւ շրջակա գյուղերի ողջ բնակչությունը՝ անկախ ազգային պատկանելությունից, եւ անգամ «Խառանից մինչեւ Պոնտոսի ծովը» իշխող Օթման բեկն էր հարգանքով վերաբերվում Նաղաշին: Այս ամենի ապացույցն էր այն, որ Օթման բեկը Նաղաշին կարգում է բոլոր քրիստոնյաների առաջնորդ՝ մեծ պարգեւներով ու թագավորական հանդերձանքով:

Մկրտիչ Նաղաշը գրական ասպարեզ մուտք է գործում 15-րդ դարի առաջին տասնամյակներին, երբ լենկթեմուրյան արշավանքներից ու կոտորածներից հետո ողջ Այսրկովկասն ու Փոքր Ասիան գրավված էին հորդաների կողմից: Իսկ մոնղոլական բռնապետության դաժան հարվածներից, ավերումներից, ավար-կոտորածներից դեռեւս ուշքի չեկած հայ ժողովուրդը մի նոր կոտորածի, բռնության, թալանի ու գերեվարության էր ենթարկվում:

Գրիգոր Խլաթեցու վկայությամբ՝ Լենկթեմուրի սուրն անխնա կոտորում էր բոլորին, բոլոր նրանց, ովքեր հանդիպում էին իր ճանապարհին՝ թե՛ քրիստոնյա, թե՛ մուսուլման, թե՛ հայ, թե՛ տաճիկ, թե՛ պարսիկ եւ թե՛ թուրք *(Մկրտիչ Նաղաշ, Տաղեր, էջ 13)*.

Այս ոչ միայն քրիստոնէիս,
Այլ ի տաճիկ ազգաց բնաւիս,
Չի հասարակ էր նեղութիւն
Պարսից ազգին, հայ եւ թուրքին...

Շարունակությունը՝ էջ 6

ԱՍՏԾՈ ՄԱՐԳԱՐԵՆ



Սկիզբը՝ էջ 2

Նոր Ուխտի վկայության համաձայն՝ Երուսաղեմում տեղի է ունենում առաքելական ժողով, եւ առաքյալներն ու երեցները քննարկում են քրիստոնեություն ընդունած հեթանոսների թլփատության հարցը *(տե՛ս Գործք ԺԵ)*. Հակոբոս առաքյալը հիմնավորում է, որ հեթանոսությունից առ ճշմարիտ Աստված եկածներին պետք չէ պարտադրել Մովսիսական օրենքով սահմանված թլփատությունը եւ արհեստական խոչընդոտներ ստեղծել նրանց համար. իր խոսքում առաքյալը անդրադառնում է նաեւ Ամոսի մարգարեությանը *(Գործք. ԺԵ 15–17 հմմտ. Ամ. Թ 11–12)*: Այսինքն՝ Ամոսից հետո քարոզած մարգարեներն ու առաքյալները քաջատեղյակ էին նրա գրքին, ուստի անհրաժեշտության դեպքում մեջ էին բերում կամ մեկնում էին մարգարեի խոսքերը եւ կանխասացությունները:

Մարգարեական գրքի առաջին հատվածում մանրամասնորեն թվարկվում եւ նկարագրվում են այն մեղսագործությունները, որոնց պատճառով վրա են հասնելու սարսափելի դժբախտություններ ու աղետներ: Նշենք մի հատված, որն ականջից հիշեցրեց Հայոց ցեղասպանությունը. *«Այսպես է ասում Տերը. «Ամոնացիների երեք ամբարշտությունների եւ մանավանդ չորրորդի համար, քանի որ նրանք ճեղքեցին հղի կանանց փորը…. պիտի պատժեմ նրանց» (Ամ. Ա 13)*:

Ամոս մարգարեն խոսում է նաեւ մյուս մեղքերի՝ կռապաշտության, Աստծուն ուրանալու, անարդարության, ագահության, ամբարշտության, տնանկներին հալածելու եւ այլնի մասին: Նա հստակ մատնանշում է այն վիթխարի վիհը, որը բաժանում է հարուստներին եւ աղքատներին *(հմմտ. Ամ. Զ 3–7)*. վերջիններս զրկվում են ապրուստի տարրական պայմաններից ու միջոցներից, իսկ հարկերը չվճարելու արդյունքում՝ ստրկացվում: Արդարությունը վաճառված է, դատավորները՝ կաշառված *(հմմտ. Ամ. Բ 6–7)*, իսկ ճշմարտախոսներն ու արդարամիտները հալածվում են *(հմմտ. Ամ. Ե 10)*: Մարգարեն զգուշացնում է՝ *«…աղքատներին նեղելով եւ նրանցից ընտրությամբ կաշառք առնելով՝ շքեղազարդ ապարանքներ պիտի շինեք, բայց չեք բնակվի նրանց մեջ, գեղեցիկ այգիներ պիտի տնկեք, սակայն նրանց գինին չեք խմի…» (Ամ. Ե 11)*:

Մարգարեի խոսքերի համաձայն՝ Աստծո առջեւ առավել մեղավոր էր հենց Իսրայելը (որպես ժողովուրդ), քանզի բոլոր ազգերից նա էր ընտրյալ *(հմմտ. Ամ. Գ 2)*. ամենագութ Հայրը իսրայելացիներին ազատեց փարավոնի գերությունից, դուրս բերեց Եգիպտոսից *(հմմտ. Ամ. Թ 7)*, առաջնորդեց դեպի Ավետյաց երկիր *(հմմտ. Ամ. Բ 9–10)*, սակայն հենց նրանք ուրացան իրենց հայրերի Աստծուն եւ սկսեցին երկրպագել տարբեր կուռքերի *(հմմտ. Ամ. Ե 26–27)*: Ամոսի մարգարեությունից կարող ենք հստակ հասկանալ, որ ընտրյալությունը չի կարող փրկության երաշխիք լինել. ճիշտ հակառակը՝ Աստծո կողմից ընտրվածը՝ լինի ազգ թե անհատ, առավել մեծ պատասխանատվություն եւ պարտավորվածություն է կրում: Ընտրյալը եւս իր արարքների համար ենթարկվում է Աստծո դատաստանին այնպես, ինչպես մյուսները *(հմմտ. Ամ. Գ 2, Թ 7)*:

Մարգարեական այս գրքի Է-Թ գլուխները հինգ տեսիլքներն են, որոնք ամենազոր Աստծո հետագա միջամտության խորհրդանշաններն են:

Օգոստինոսն իրավամբ ընդգծում է, որ Ամոսը մարգարեացավ Աստծո Որդու եւ Եկեղեցու մասին: Այսպես՝ մարգարեական գրքում գրված է. *«…ես եմ Նա, որ իր օծյալին ի հայտ է բերում մարդկանց մեջ…» (Ամ. Դ 13)*, կամ՝ *«Նա, ով պատրաստում է իր համբառնալը դեպի երկինք, ով իր ավետիսն է հաստատում երկրում…. Ամենակալ Տեր է Նրա անունը» (Ամ. Թ 6)*:

Ամոս մարգարեի գրքին հաճախ են անդրադառնում քրիստոսաբանական եւ վախճանաբանական հարցերի քննարկման ժամանակ. օրինակ՝ *«Այդ օրը,– ասում է Տեր Աստված,– այնպես պիտի լինի, որ արեգակը մայր պիտի մտնի միջօրեին, եւ երկրում լույսը պիտի խավարի ցերեկով» (Ամ. Ը 9)* հատվածը մեկնելիս Եկեղեցու հայրերը (Իրենեոս Լուգդունացի, Տերտուղիանոս, Կիպրիանոս Կարթագենացի) հիմնավորում են, որ Ամոսը մարգարեացել է Աստծո Որդու խաչելության ժամանակ տեղի ունեցած խավարման մասին՝ *«Եվ կեսօրին ամբողջ երկրի վրա խավար եղավ մինչեւ ժամը երեքը» (Մատթ. ԻԷ 45, հմմտ. Մարկ. ԺԵ 33–41, Ղուկ. ԻԳ 44–49, Հովհ. ԺԹ 28–30)*:

Ամոսի մարգարեությունը Դավթի խորանի վերականգնման մասին *(տե՛ս Ամ. Թ 11–12)* եկեղեցական հայրերը մեկնել են առավելապես փրկագործական տեսանկյունից:

Ըստ էության՝ մարգարեական այս գիրքն ապաշխարության մի կոչ է ոչ միայն իսրայելցիներին, այլ նաեւ մյուս ազգերին, քանզի Աստված բոլորի Հայրն է: Ուշագրավ մեկ հանգամանք եւս. Ամոսը մյուս ազգերի մասին խոսելիս շեշտում է, որ ժողովուրդների միջեւ եղած ատելությունն ու թշնամանքը Աստծո աչքին խիստ դատապարտելի են, որովհետեւ բոլորը հավասար են Նրա համար: Մարգարեն նաեւ ընդգծում է, որ Ամենակալն Իր իսկ արարած մարդուց պահանջում է ոչ թե արտաքին արարքներ՝ ընծայաբերում, զոհերի մատուցում ու երկրպագություն, այլ՝ ճշմարիտ հավատ եւ աստվածահաճո կյանք: Այսինքն՝ ծանր մեղքերը չեն փոխհատուցվում եւ «չեզոքացվում» աղոթքով եւ զոհաբերությամբ: Ներքին հաստատուն հավատը, աստվածադիր պատվիրաններին հավատարմությունն առավել կարեւոր են, քան արտաքին ծեսն ու արարքը:

Ամոս մարգարեն նաեւ հասարակական հավասարության եւ արդարության քարոզիչ էր:

Գիրքը ավարտվում է Դավթի խորանի վերականգնման, այսինքն՝ փրկության խոստումով, *«որպեսզի մնացյալ մարդիկ եւ բոլոր ազգերը, որոնց վրա կա Աստծո անունը, փնտրեն Նրան» (հմմտ. Ամ. Թ 12)*:

Ամոս մարգարեի գրքում որեւէ տեղեկություն չկա նրա նահատակության վերաբերյալ: Սակայն պարականոն որոշ գրքերի համաձայն՝ մարգարեի խոսքերից անասելիորեն «կատաղած» Ամասիա քուրմն սկսում է անխնա ծեծել նրան, ապա քուրմի որդին՝ Օզիան, ծանր փայտով հարվածում է մարգարեի գլխին եւ մահացու վիրավորում նրան: Մարգարեին ծանր վիճակում տեղափոխում են Հուդայի թագավորություն, որտեղ եւ նա, այդպես էլ չապաքինվելով, մահանում ու թաղվում է հայրենի Թեկուա քաղաքում:

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

Հայոց Հայկական օրացոյցն ու Հայոց Ամանորի տօնը (Նաւասարդ)

Սկիզբը՝ էջ 3

Ի թիւս այլ նորամուծութիւնների՝ նա նաեւ ստեղծել է հայկական նոր՝ *անշարժ ամսակարգով օրացոյց* (որի ամսաթուերը չեն շարժւում արեւադարձային տարուայ օրերի նկատմամբ), որ յետոյ յայտնի դարձաւ «Սարկաւագադիր կարգ» անունով: Կամենալով ստեղծել հայկական անշարժ ամսակարգ՝ Սարկաւագը պիտի, անշուշտ, ընտրէր, թէ որ օրուայ վրայ է սեւեռուելու Հայոց Նաւասարդի մէկը: Այս սեւեռման կէտը որոշելու այլ հնարաւորութիւն չունենալով՝ նա իր նոր օրացոյցի Տարեմուտը ընտրում է այնպէս, որ դա առաւելագոյնս ներդաշնակի Սուրբ Գրքի եւ դրան մերձ թարգմանական գրքերում առկայ հայ եւ օտար ամիս-ամսաթուերի զուգադրումներին: Իսկ այդպիսի զուգադրումներ հին շրջանի հայ թարգմանական աղբիւրներում առկայ են: Այս տեսակ զուգադրումների առկայութիւնը հին թարգմանական աղբիւրներում որոշ հայ հեղինակների առիթ է տուել մտածելու, թէ հայ դասական մատենագրութեան սկզբի ժամանակներում (Ե դարի սկիզբ) պէտք է եղած լինի մի անշարժ ամսաթուերով հայկական օրացոյց, որի հիման վրայ էլ մեր սուրբ թարգմանիչները կատարել են խնդրոյ առարկայ ամսաթուային զուգադրումները: Իրականում, սակայն, դրանք բոլորն էլ ոչ թէ մեր հանճարէղ թարգմանիչների արածն են, այլ յետսամուտ են եւ արդիւնք առաջին արագ արտագրութիւնների ընթացքում գրիչների կողմից ձեռագրերի մէջ ներմուծուած յաւելումների: Ի հիմնաւորումն սրա՝ նկատենք, որ հինգերորդ դարի այդ աղբիւրներում առկայ զուգադրումները (հայ եւ օտար ամիսների) միակերպ չեն եւ տարբեր դէպքերում տալիս են տարբեր դիրքեր Նաւասարդի մէկի համար: Այս տարբերութիւնները ժամանակին նկատել եւ դրանցից դժգոհել է տակաւին Սարկաւագ վարդապետը: Բնականաբար, այդ տարբերութիւնների պատճառն այն է, որ այդ տարբեր զուգադրումներն արուել են տարբեր ժամանակներում, որի հետեւանքով էլ դրանցում արտացոլուած են տարբեր թուականներին եղած դիրքերը Նաւասարդի մէկի համար:

Կան նաեւ Նաւասարդեան տօնի այլ «հիմնաւորուած» դիրքեր, որոնք այստեղ չենք քննի: Այս ամենից ակնյայտ երեւում է, որ անհրաժեշտութիւն կայ նորովի քննելու եւ պարզելու, թէ ի վերջոյ արեւադարձային տարուայ որ մասում է եղել հին Հայոց Նաւասարդի տօնը:

Այս նոր քննութիւնն արուել է՝ օգտուելով արդէն աստղագիտութեան ընձեռած հնարաւորութիւններից: Պարզուած է, որ հայերը հնում իրենց գլխաւոր տօնի օրը որոշելու համար կատարել են աստղագիտական դիտումներ: Դիտել են Հայկն (Orion) համաստեղութեան գլխաւոր աստղի առաւօտեան առաջին ծագումը՝ *արեգակնային ամբարձումը*: Այս երեւոյթն այսօր եւս ենթակայ է հաշուարկման՝ ոչ բարդ եղանակներով: Օգտուելով ոլորտային եռանկիւնաչափութեան յայտնի բանաձեւերից՝ հաշուարկուում եւ ստացուում է, որ մեզ հետաքրքրող դարաշրջաններում Հայաստանի միջնաշխարհի տարածքից Հայկն համաստեղութեան գլխաւոր աստղի՝ Հայկի աջ ձեռքի արեգակնային ամբարձումը կդիտուէր *ամառնամուտից 8 օր առաջ*: Մեր արդի օրացոյցով սա կլինի Յունիսի 14-ը: Այսինքն՝ հնում *Հայոց գլխաւոր տօնը՝ Նաւասարդը (Ամանորը) եղել է ամառնամուտից շուրջ մէկ շաբաթ (8 օր) առաջ, որ մեր արդի օրացոյցով լինում է Յունիսի 14-ը*: Այս ամսաթուի ճշգրտումով ինքնաբերաբար ճշգրտւում է նաեւ Հայկեան օրացոյցի սկիզբը: Այսպէս. հիմք ընդունելով, որ օրացոյցի սկզբի տարում պիտի իրար զուգադիպէին անշարժ տօնը՝ Նաւասարդը եւ շարժական Նաւասարդ ամիսը, կարող ենք գտնել, թէ որ թուականին հայկական շարժական Նաւասարդ ամիսը կզուգադիպէր անշարժ Նաւասարդեան տօնին, այսինքն՝ կլինէր ամառնամուտից 8 օր առաջ: Սրա համար էլ ստանում ենք Ն. Ք. 2341 թ.: Այսինքն՝ *Հայոց հնագոյն Հայկեան օրացոյցը հիմնադրուել է Ն. Ք. 2341 թուականին*:

Անշուշտ, այս օրացոյցի տարեհաշիւը մեզ չի հասել անմիջական կիրառութեամբ: Աւելին՝ ամենայն հաւանականութեամբ այդպիսի կիրառութիւն բնաւ չի էլ եղել: Հայկեան օրացոյցի տարեհաշուի կիրառման առաջին յայտնի օրինակը հ. Դ. Ալիշանի փորձն է (Հայոց Բուն թուական անուամբ), որ, սակայն, իբրեւ այս օրացոյցի սկզբնատարի վերցրել է Ն. Ք. 2492 թուականը: Ալիշանը, չունենալով աստղագիտական եղանակներ կիրառելու հնարաւորութիւն, այս սկզբնատարին գտել էր միայն օրացուցային հաշուարկի հիման վրայ: Եւ, որակապէս ճիշտ լինելով հանդերձ, քանակապէս այն 150 տարով առաջ է այդ նոյն՝ Հայկեան օրացոյցի հիմնադրման իրական ժամանակից:

Արդ նայենք մի փոքր էլ, թէ օրացուցային եւ աստղագիտական հաշուարկներից զատ՝ ինչ այլ հիմնաւորումներ կարող ենք մատնանշել՝ յօգուտ մեր ստացած թուականի (դրա հետ մէկտեղ՝ նաեւ ամսաթուի):

Շարունակելի

Գրիգոր ԲՐՈՒՏԵԱՆ
Ֆիզիկամաթեմատիկական գիտ. թեկնածու

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

(մարդու ստեղծումն ու ընտանիքի դերակատարությունը)

«Աստուած դրախտ տնկեց Եդեմում՝ արեւելեան կողմը, եւ այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն» (Ծննդ. 2. 8): «Ո՛վ, ինչ զարմանալի է. Երկինք ու Երկիրը ի միասին կը մշակեն ամուսնական եւ խորհրդական դրախտն…» *(Խրիմյան Հայրիկ)*:

Մատաս Թեոդոր (1606–1676), «Սուրբ ընտանիք», ՀԱՊ

Աստվածաշնչի առաջին իսկ տողերից ի հայտ է գալիս, որ մարդու ստեղծումը ոչ միայն ինքնանպատակ չէ, որեւէ հրամայականով պայմանավորված կամ առավել եւս պահի թելադրանքով, այլ՝ միանգամայն տրամաբանական է եւ կոնկրետ նպատակ ունի. *«Աստուած ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութեամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների եւ երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ»: Եւ Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան» (Ծննդ. Ա 26 - 27):* Ուրեմն «անմահին Աստուծոյ անմահ պատկեր մարդս է», ինչպես վկայում է Եղիշե աստվածաբանը: Այդ նպատակն այնքան պատճառաբանված ու առարկայական է, այնքան որոշակի, որ անգամ սահմանում է ամուսնա-ընտանեկան կյանքի հարաբերակցությունն ու սկզբունքները *(Ծննդ. Ա 28, Բ 15, 21, 24, Գ 16, Մատթ. ԺԹ 4–6, 8)*: Այլ խոսքով՝ Աստված Իր բազմախորհուրդ սիրո եւ անսպառ ողորմության (պատճառով եւ արդյունքում) հետեւանքով կամեցավ հաստատել սիրո արքայություն եւ Իր հայտնությունը շնորհել ստեղծվածին. *«Աստուծո ամենազոր հրամանով եւ Աստուծո ենք պարտական աշխարհի բոլոր բարյաց երախտիքը: Ոչ մի երկնային մարմին, ոչ մի բանական արարած, ոչ մի կենդանի եւ ոչ չնչին ստեղծված անգամ Աստուծո արարչական հրամանից դուրս չէ ծագել, ըստ որում եւ այնտեղ որոշվում է կիրակվա, ամուսնության, ամուսինների փոխադարձ հարաբերության սկզբունքը (Ծննդ., Բ 2–3, 23, 24. համ. 1 Կոր., 11. 3–12, Եփ. 5. 25. Մատթ. 19. 3 եւ այլն)» (Արշակ Տեր-Միքելյան «Քրիստոնեական»)*: Այսինքն՝ Աստված մարդուն ստեղծեց որպես *«արարչագործության նպատակ»* եւ *«արարչական կամքի միջնորդ»* եւ Իր պատկերը դարձնելով՝ շնորհեց *«բարեհակում ձիրքով»*, որպեսզի *«մարդն էլ ձգտի անել այն, ինչ որ Աստված որոշել է»*: Հետեւողաբար, մարդուն պարտք է հնազանդվել Աստծուն *(հմմտ. 1 Կոր. Ջ 20)*, նաեւ տեր եւ պաշտպան լինել բնությանն ու կենդանական աշխարհին *(Ծննդ. Ա 28, Թ 1–3. Սաղմ. Ը 7, Իմաստ. Թ 1–3)*: Ըստ այսմ՝ մարդու սուրբ պարտքն է կատարելության ձգտելն ու Աստծուն ծառայություն մատուցելը, «Լինել Աստուած շնորհօք ընդ Աստուծոյ միաւորելովն», ինչպես ձեւակերպում է մեր հավատքի հայր ս. Գրիգոր Լուսավորիչը: *«Մարդն, Աստուծո պատկեր լինելով, բնականաբար յուր հոգվով ծագման կախումն ունի Աստուծուց, եւ նորա դիմումն էլ առ Աստված է, ինչպես եւ երանությունն Աստուծո հետ է… Նորա աշխարհային կյանքն Աստուծո կյանքով է կյանք եւ նորա աշխարհային բոլոր նպատակների նպատակը Աստուծո արքայությունն է…Կարճ ասած, մարդ տեր է աշխարհի՝ միմիայն աշխարհի վերջնական նպատակի, այսինքն՝ Արարչին ծառա լինելով… Ըստ այսմ՝ մեր մարմնավոր ձգտումները պայմանավորված են մեր հոգեւոր ձգտումներով» (Արշակ Տեր-Միքելյան «Քրիստոնեական»)*:

Հետեւաբար աստվածային պատկերով, *«կամաց ու հաղորդակցությամբ»* մարդու *«աշխարհի գալոցն»* էլ «Աստծո արարչական գործունեության հետեւանք է եւ Աստծո արարչական կամաց մի նոր հայտնություն», որի կենսագործման հենարանը ապա որտեղ է, եթե ոչ ընտանիքում *(հմմտ. Մատթ. 26. 24) («Մովսիսին օրէնքները Տէր Աստուած Սինայի սարէն տուաւ, իսկ ամուսնական օրէնքը դրախտէն կը սկսի: Անդրանիկ մարդն Ադամ եւ նորա ամուսին Եւայի երբ արարչութեամբ աշխարհ եկան, այս բնական օրէնքը իրենց գոյութեան հետն էր: Եւ ինչ է այս արարչադիր օրինաց զօրութիւն եւ նպատակը: Այդ ինքնին յայտնի է, զօրութիւն բնական սէրն է եւ նպատակը մարդկային սեռին բարգաւաճումն իփառս իւր Արարչին» (Խրիմեան Մկրտիչ, «Դրախտի ընտանիք»)*: Ապա ուրեմն ընտանիքը եղել եւ մնում է մարդուն Աստծո հետ կապող այն հանգույցն ու հանդիպակետը, որտեղ ամրագրվում է աստվածահաստատ կամրջի շարունակական ու անխափան երաշխավորությունը *(հմմտ. Մարկ. 8. 20)*: Ստեղծագործության վերջում արդեն, որպես *«սքանչելիքների բարձրակետ»*, Աստված ստեղծում է մարդուն. ըստ որում, ինչպես հաստատում են Ս. Եկեղեցու հայրերը, այնքան բարձր եւ այնքան կարեւոր է մարդու դերակատարությունը, որ անգամ հրեշտակները պարտականություն ունեն սպասավորելու նրան: Հետեւաբար, ինչպես հորդորում է ս. Գրիգոր Լուսավորիչը, յուրաքնչյուր ոք պարտ է իր արժանիքն ու կոչումը պահպանելու համար քանքարը շահեցնելն ու գիտակցաբար եւ հոգեւոր զարգացմամբ Աստծուն գործակից լինելը. *«Ուստիեւ հրեշտակները, հոգեղեն, հետեւաբար բարձր կարողություններով օժտված լինելով հանդերձ, նշանակված են՝ մարդկանց փրկության համար սպասավորելու…*

Շարունակությունը՝ էջ 7

Երեւանի հիմնադիր Արգիշտի արքայի, Ռուսա 2-րդ Հայոց եւ հարակից հարցերի մասին

Սկիզբը՝ թիվ 10

Բ ԱՅՑ ես անպատասխան չեմ թողնի Գրեկյանի ակնարկները: Կարդալով նրա գրածները՝ ես, անկեղծ ասած, գալիս եմ այն մտքին, թե այս մարդն ընդունակ չէ ինքնուրույն ըմբռնել իր կարդացածը: Քանի որ նա առանց ընթերցողի օգնության է կարդացել իմ հոդվածը, ուստի եւ առանց այլեւայլության ինձ է վերագրել իր սխալ ընկալած տեսակետները.

1. Գրեկյանը խորին շնորհակալություն է հայտնում բան. գիտ. դոկտոր Մարգարիտ Խաչիկյանին՝ Արգիշտիի 173 արձանագրության II սյան 52-րդ տողի թարգմանության համար. «Նման թարգմանության հնարավորության վրա մեր ուշադրությունը հրավիրեց բ. գ. դ. Մարգարիտ Խաչիկյանը, ում հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը» *(ՊԲՀ, էջ 182, ծան. 24)*: Բայց ուրարտագետ-խուռիագետ գիտնականի այս օգնությունից հետո նույնիսկ Գրեկյանը գլխի չի ընկել, որ Խալդի աստծո նախանշած գործողությունը Արգիշտին պետք է կրկներ III սյան 1-ին տողում, ինչպես եւ կից ռուսերեն թարգմանության մեջ. «Ես Աշշուրի զորքը ջարդեցի իմ երկրում»: Ասեմ ավելին՝ II եւ III սյուների 57+1 տողերի ամբողջական նախադասությունը Արգիշտին կրկնում է նաեւ III սյան 25-րդ տողում՝ ուրարտերեն եւ կից ռուսերեն թարգմանության մեջ: Հիմա ինչ, ես էլ հայտարարեմ, թե Գրեկյանն առանց ընթերցողի օգնության ոչ միայն ուրարտերեն, այլեւ ռուսերեն իսկ չի հասկանում:

2. «…պրն Մուշեղյանն *աներկբա ընդունում է* (ընդգծումը իմն է – *Ա. Մ.*) Արգիշտի Ա-ի համար Գեորգի Մելիքիշվիլու առաջարկած ժամանակագրությունը»: Ես ոչ մի տեղ *աներկբա չեմ ընդունել* Մելիքիշվիլու կարծիքը՝ Արգիշտիի գահակալման 1-ին տարվա մասին, որը Մելիքիշվիլին ինքը պայմանական էր համարում, այլ դրա փոխարեն Գրեկյանի ուշադրությունը հրավիրել եմ Նիկողայոս Ադոնցի ավելի հիմնավոր տեսակետի վրա՝ բառացի գրելով հետեւյալը. «Նիկողայոս Ադոնցը, … որի անունը երբեւիցե չի հիշատակում Գրեկյանը իր հրապարակումներում, շատ ուշագրավ մեկնակետ է նշում Արգիշտի I-ի գահակալման 1-ին տարվա համար՝ իր կյանքի վերջում ստեղծած ֆրանսերեն «Հայաստանի պատմություն» հիմնարար աշխատության մեջ. «Եթե Արգիշտիի առաջին արշավանքը իր գահակալության վեցերորդ տարում համապատասխանում է Սալմանասար IV-ի 781 թվականի առաջին պատասխան արշավանքին, Արգիշտիի գահակալության առաջին տարին, ուրեմն, 785 թվականն է: Սա ուրարտական թագավորների ժամանակագրության հաստատուն կետ է հանդիսանում» *(Ն. Ադոնց. Քննական պատմություն Հայոց (Երկեր հինգ հատորով), Դ, ԵՊՀ հրատ., 2009, էջ 218)*: Այնպես որ Արգիշտիի գահակալության սկիզբը Մելիքիշվիլուց շատ ավելի վաղ է հիմնավորվել եւ ընդհանուր հավանության արժանացել եվրոպական ուրարտագիտության մեջ:

3. Ինձ ուղղված հաջորդ անարդարացի առարկությունը վերաբերում է ասորեստանյան էպոնիմատին. «Կ. Գրեյսոնը նորասորեստանյան արքայական արձանագրությունների դիվանի հեղինակ է եւ ոչ թե ասորեստանյան էպոնիմների ցանկի նոր հրատարակության, որի հեղինակն է Ա. Միլարդը»: Բայց ես մի՞ թե որեւէ տեղ ասել եմ, թե Գրեյսոնը ասորեստանյան էպոնիմատի հեղինակն է: Ես ասել եւ պնդում եմ, որ Գրեյսոնը, նրա հետ եւ Գրեկյանը հաշվի չեն առել Ֆորրերի նոր կազմած կանոնակարգը՝ ասորեստանյան էպոնիմատը մեկական տարով առաջ շարժելու մասին, որով ի չիք է դառնում Էրեբունիի հիմնադրման հոբելյանը 1 տարով հետաձգելու Գրեկյանի հարցադրումը:

Ըստ այսմ, պետք է հանգիստ թողնել 1968 թվականից արդեն լայն տարածում գտած Էրեբունիի տոնակատարության կարգը, մանավանդ որ շատ երեւելի պատմաբաններ եւ ուրարտագետներ են զբաղված եղել հայ ժողովրդի համար այդ բացառիկ տոնը հաստատելու խնդրով՝ Խորհրդային ազգերի «հարազատ ընտանիքում», որտեղ ամեն մի այդպիսի բացառիկ երեւույթ դիտվում էր իբրեւ «ազգային սնապարծություն»: Եվ հիմա ասել, թե այդ երեւելի գիտնականները «Քրիստոսից առաջ մեկ տարին» եւ «Քրիստոսից հետո մեկ տարին» առանց հասկանալու երկու տարի են հաշվել, իհարկե ծիծաղելի է: Եվ դեռ Գրեկյանը վրդովված զարմանում է, թե Մուշեղյանը չի գիտակցում իր շոշափած հարցի կարեւորությունը:

Բայց ես այժմ իմ հարգելի ընթերցողներին կբացահայտեմ մի փոքրիկ տոմարական գաղտնիք, որ իմ սեփական մեկնաբանումն է, եւ որին անտեղյակ է պարոն Գրեկյանը: Քանի որ ներկայումս ամբողջ քրիստոնյա աշխարհը ժամանակագրությունը վարում է հիմնականում Հուլյան տոմարով, ապա օրացուցային տարին ավարտվում է դեկտեմբեր ամսին («դեկտեմբեր» լատիներեն նշանակում է «տասներորդ ամիս»), եւ մենք Նոր տարին նշում ենք հունվարի 1-ին, այսինքն՝ տարվա 11-րդ ամսի առաջին օրը: Խնդիրն այն է, որ Հուլյան տոմարով տարվա սկիզբը համընկնում է գարնանային արեւադարձի օրվան՝ մարտի 21-ի եւ 22-ի գիշերահավասարին: Ուրեմն, օրացուցային տարին բաժանվում է երկու մասի: Այնպես որ, թե՛ 1968 թվին, երբ լրանում էր Երեւանի հիմնադրման 2750-ամյակը եւ թե՛ 2018-ին, երբ լրացավ 2800-ամյակը, մարտի 21–22-ի արեւադարձից հետո մենք ունենում ենք գարնանային Նոր տարով 1969 եւ 2019 թվականները: Գարնանային Նոր տարվա չհմացության արդյունքում էլ Գրեկյանի մոտ առաջ է եկել մեկ տարվա թվացյալ անճշտությունը:

Իսկ ինչ վերաբերում է Արգիշտիի գահակալման տարիները 5–6 տարով ետ տանելու եւ նրա հայր Մենուայի վերջին տարիները նույնքան կրճատելու պնդումը, ապա դա նրա մասնավոր կարծիքն է, որը որեւէ կերպ հիմնավորելու ոչ հիմք կա եւ ոչ կարիք:

Շարունակությունը՝ էջ 6

Երեւանի հիմնադիր Արգիշտի արքայի, Ռուսա 2-րդ Հայորդու եւ հարակից հարցերի մասին

Սկիզբը՝ էջ 5

Եթե Գրեկյանին իսկապես հետաքրքրում է, թե ինչ բան է ժամանակագրական հաշվարկը, ապա ես նրան խորհուրդ կտամ կարդալ 2007 թ. լույս տեսած իմ «Մովսես Խորենացու դարը» մենագրությունը, որի մեջ ես բացահայտել եմ, որ Բյուզանդական ժամանակագրության մեջ գրեթե վեց դար շարունակ բոլոր պատմական իրադարձությունները կայսրերի, ինչպես եւ նրանց ժամանակակից հարեւան թագավորների գահակալության թվականները ցույց են տրված յուրաքանչյուր դեպքում 6–7 տարի շեղումով՝ Հռոմեական ժամանակագրության համեմատ:

4. Իրեն քննադատելու համար չարացած Գրեկյանը, ակնհայտ վրեժխնդրությամբ ինձ նույնացնելով իմ ընթերցողի հետ, գրում է. «Հուսանք՝ նրա կամ իր օգնականի համար ռուսերենը մատչելի լեզու է, բայց ակնհայտ է, որ նույնը չենք կարող ասել եվրոպական այն հիմնական լեզուների մասին (նկատի ունենք, նախեւառաջ, անգլերենը եւ գերմաներենը, ուրարտագիտության պարագայում՝ նաեւ իտալերենը), առանց որոնց իմացության պատմագիտության բնագավառում անհնար է իրականացնել որեւէ արդյունավետ ուսումնասիրություն, թեկուզեւ՝ անդրադարձի մակարդակով»: Փոխանակ այս պարզունակ խրատը ինձ տալու, ավելի ազնիվ կլիներ, եթե Գրեկյանը խոստովաներ «ԱԶԳ» շաբաթաթերթի ընթերցողներին, որ ես՝ Մուշեղյանս, Գրեյսոնի եւ իր փոխարեն գտել եւ գերմաներեն բնագրից թարգմանել եմ Լեհման-Հաուպտի խնդրո առարկա հատվածները՝ ցույց տալու հայ ընթերցողներին Գրեյսոնի եւ իր գլխիվայր շրջած պատմական փաստերը: Եթե պարոն Գրեկյանը գեթ մեկ անգամ բացած լիներ իմ վերոհիշյալ մենագրությունը, որտեղ օգտագործված են հարյուրավոր օտարալեզու աղբյուրներ ուրարտական, սասանյան վիմագիր արձանագրություններ, պահլավերեն եւ զենդերեն նորահայտ ստուգաբանումներ, եգիպտական պապիրուսներ, որոնց մեջ իմ կողմից կատարվել են լատիներեն, արամեերեն, պահլավերեն եւ ուրարտերեն շատ էական բնագրական նոր վերծանումներ եւ ուղղումներ, ապա կհասկանար, թե ինչ անհարմար վիճակի մեջ է դնում ինքն իրեն, երբ շատ ուշացած խրատ է տալիս օտար լեզուներ տիրապետելու անհրաժեշտության մասին:

Գալով Միրիո Սալվինիի հայտնաբերած Ռուսա Էրիմենահիի արքայի նոր ընդարձակ արձանագրությանը՝ ես շատ բարձր եմ գնահատում իտալացի ուրարտագետի այդ հիրավի կարեւոր ներդրումը ուրարտագիտության մեջ, ինչպես եւ նրա լրացուցիչ վերծանումները: Սակայն պետք է ասեմ, որ այս կապակցությամբ ծայր առած նոր բուռն հետաքրքրությունը Էրիմենայի եւ նրա որդի Ռուսայի անձերի բացահայտման եւ ժամանակագրական լուծումների վերաբերյալ բոլորովին բավարար չեն: Գրեկյանի «Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտը եւ ուրարտական արքայացանկը» հոդվածը *(«ՎԷՄ», 2017, թիվ 2, էջ 23–37)* երեք Ռուսաների մասին՝ զանազան օտարազգի հետազոտողներից քաղված շատ ենթադրություններ է պարունակում՝ հեղինակի եզրակացությամբ հանդերձ: Սարգոնն իր արձանագրության մեջ Ուրզանային անվանում է «չարագործ եւ ուխտազանց, որ դրժել է Աշշուրի աստվածներ՝ Շամաշին, Նեբոյին եւ Մարդուկին տված երդումը» եւ նույն թվականին հարձակվելով Մուծածիրի վրա՝ կողոպտում է Ուրզանայի տաճարի բոլոր գանձերն ու սպասքները: Այդ լսելով՝ Ռուսա I-ը ինքնասպան է լինում: Թեեւ այդ թվականից Ուրարտուի գահին հաջորդում է Ռուսա I-ի որդի Արգիշտի II-ը, բայց Գրեկյանը, հետեւելով Մ. Սալվինիին, ենթադրում է, թե ինքնասպան Ռուսային հաջորդած պետք է լինի Ռուսա Էրիմենահի թագավորը, որի ընդարձակ արձանագրությունը հայտնաբերել է իտալացի ուրարտագետը. «... մեզ հայտնի նյութի ընձեռած հնարավորությունների սահմաններում,– գրում է Գրեկյանը,– առավել հավանական է թվում Ռուսա Էրիմենայորդուն տեսնելու Ռուսա Սարդուրորդուց հետո եւ մինչեւ Ռուսա Արգիշթորդի ընկած ժամանակահատվածում: ... Ռուսա Էրիմենայորդու իշխանության շրջանը մենք թվագրում ենք Ք. ա. 713–708 թվականներով» (էջ 34–35):

Այս կարծիքը միանգամայն անհիմն է: Մուծածիրի Ուրզանա քրմապետը 414 թվին Սարգոն II-ին ժամանակակից Ռուսա I-ին հաստատում է իր հայրական բարձր գահին *(ԿՄԿՀ №387 տող 11)*: Միևչդեռ, Ռուսա I-ի հայրը Սարդուրի II-ն է: Ինչպես կտեսնենք ստորեւ, Բիայնայում Էրիմենա անունով թագավոր գոյություն չի ունեցել:

Ծանոթանալով ժամանակակից ուրարտագետների կարծիքներին՝ ես ցավով եկայն համոզման, որ նրանցից ոչ մեկը ծանոթ չէ նորվեգացի անվանի լեզվաբան եւ պատմաբան Յորգեն Կնուդզոնի տեսակետին, որը խնդրո առարկա Ռուսային armen (հայ) է անվանում: Ուստի առեղծվածի միակ ճիշտ լուծումը պատկանում է տողերիս գրողին – Ռուսայի Էրիմենահիի մակդիրը ոչ թե նրա հայրանունն է, այլ «հայ» ցեղանունը:

Ըստ այսմ, Ռուսա Հայորդին Ռուսա II-ն է, որ հաջորդել է Արգիշտի II-ին՝ գահակալության նույն տարիներով *(մ. թ. ա. 684–645 թթ.)*: Նա է ստեղծել Քեշիշ-գյոլ ծովը, բայց ոչ կլիմայական փոփոխությունների պատճառով, ինչպես ենթադրում է Գրեկյանը՝ XXI դարի մարդու մտայնությամբ, այլ իր նոր Ռուսախինիլի մայրաքաղաքը եւ հին մայրաքաղաք Տուշպան ջրով ապահովելու, շրջակա ցանքերն ու այգիները ոռոգելու համար *(տես ԿՄԿՀ № 391 արձանագրությունը՝ սխալմամբ վերագրված Ռուսա I-ին)*: Ռուսա Հայը կամ Հայորդին բիայնացի չէ: Այս եւ շատ ուրիշ նորույթներ Ռուսա Հայորդու մասին իմ բացահայտումներն են: Ռուսայի արձանագրության մեջ եղած tubarduni ubardugi (ubardui) ուրարտերեն բառերը (Մ. Սալվինիի նորագյուտ արձանագրության ԴԿ I տող 7 եւ ՀԿ II տող 29–30) բոլորովին էլ Ռուսայի թագադրման մասին չեն, ինչպես թարգմանում է Գրեկյանը:

Շարունակությունը՝ էջ 8

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Սկիզբը՝ էջ 3

15-րդ դարի գեղարվեստական գրականության համար թեմա են դառնում, մի կողմից, ամեն կերպ հարստահարվող, նվաստացող հայ ժողովրդի վիշտը, երկրի ներսում ստեղծված սոցիալական ու իրավական անհավասարությունը, մյուս կողմից՝ աշխարհիկ այդ թեմաների կողքին շարունակվում էին տարածվել երկնային, հանդերձյալ կյանքին նվիրված կրոնական մոտիվներով գրված բանաստեղծությունները:

Ի տարբերություն իր ժամանակի շատ գրողների՝ Մկրտիչ Նաղաշի ազդեցությունն ու համբավը, նրա հանդեպ հարգանքը եւ սերը մեծ էին: Ըստ վարքագրերի՝ Նաղաշի հետ հաշվի էին նստում բոլորը:

Օգտվելով այս ամենից՝ Նաղաշն ազգանպաստ գործունեություն է ծավալում, վերականգնում է «խախտեալ եւ զինացեալ եւ զհողաշէնս» եկեղեցիները եւ դրանց փոխարեն կառուցում նորերը: Նաղաշին հաջողվում է բազում գերիների ազատել անօրեններից: Մի մասին փրկագնում էր, ոմանց ազատում՝ խնդրելով «ի պարոնաց», ոմանց էլ փրկում էր իր «զօրէղ եւ սրտապինդ» ծառաների միջոցով, որոնք ճանապարհներին անօրեններից առեւանգում էին գերիներին, բերում Արղնո բերդի նորաշեն եկեղեցին՝ միաոժամանակ պահելով այնտեղ, մինչեւ որ Նաղաշի մոտ էին գալիս նրանց տերերը *(Հեռնիկ Բաղէհնցի, 15-րդ դարի հայ գրականությունը, Եր., 2004, էջ 108)*:

Սրան զուգահեռ՝ Նաղաշը նաեւ մանկավարժությամբ եւ քարոզչությամբ է զբաղվել, ինչի մասին են վկայում նրա տաղերում հանդիպող հետեւյալ տողերը *(նույն տեղում, էջ 110)*.

Րաբունի անունիս վարուք ռամկական...
եւ
Զի տիրոջ կողըն խոցեցին, զոր քաջ
զիտես եւ քարոզեմ...

Մկրտիչ Նաղաշի թողած գրական ժառանգությունը մեծ չէ: Նաղաշի հեղինակությամբ մեզ շատ քիչ գործեր են հասել: Բանասեր Հ. Էկինյանի վկայությամբ՝ Նաղաշի արձակ գործերն ու բանաստեղծությունները միայն մի ստվար հատոր կարող են կազմել: Արձակ գործերից հայտնի են միայն մի քանի հիշատակարաններ, իսկ բանաստեղծությունների թիվը չի գերազանցում 2 տասնյակը:

10–15-րդ դարերի հայ գրականության մեջ եկեղեցական, կանոնական տաղերի փոխարեն ասպարեզ են մտնում աշխարհիկ թեմայով գրված աշխույժ, կյանքով լի տաղերը, երգիծական գործերը, առակներն ու պոեմները: Տաղերգուներն սկսում են երգել բնությունը, մարդուն, հասարակական կյանքը, քննադատել եւ մերժել սոցիալական անհավասարությունները, անարդարությունները: Այսպիսով՝ գրականության թեմա է դառնում սովորական անհատը՝ մարդը՝ իր հոգեկան, հուզական ապրումներով, սիրով եւ այլ զգացմունքներով:

Նաղաշի ստեղծագործությունները բազմաբնույթ են: Նա գրել է սիրո եւ բնության, խոհական-խրատական, սոցիալական եւ պանդխտության թեմաներով բանաստեղծություններ: Դրանք աչքի են ընկնում ոչ միայն իրենց շոշափած թեմաների բազմազանությամբ, այլ նաեւ լեզվի եւ ոճի այլազանությամբ:

Նրա ստեղծագործությունների մեջ հաճախ կողք կողքի հանդես են գալիս գրաբարը եւ միջին հայերենը: Դասական գրաբարին զուգահեռ՝ Նաղաշն իր տաղերում օգտագործում է նաեւ աշխարհիկ ոճը, պատկերներն ու համեմատությունները:



Այսպես օրինակ՝ բնությանն ու սիրուն նվիրված տաղերում Նաղաշը շատ է օգտագործում ժողովրդական, բարբառային արտահայտություններ, ինչի շնորհիվ էլ բանաստեղծությունները դառնում են ավելի խոսուն եւ մատչելի ժամանակակիցների համար: Երբեմն նաեւ Նաղաշի տաղերում կարող ենք հադիպել օտար բառերի, որոնք, գործածվելով մի որեւէ հայերեն հոմանիշ բառի հետ, ավելի ու ավելի են շեշտում հեղինակի ասելիքը, ինչպես օրինակ՝ «քաղցր ու շիրին», «զահր ու լեղի» եւ այլն:

Նաղաշյան լեզվին բնորոշ հատկություն է նաեւ նախադասության շրջուն շարադասությունը: Ինչպես՝ «զինչ մեխ իշխան», «նեղ զնտան», «զինչ որ գեղեցիկ ծաղկունք», «անուշ հօտ», «զինչ բարի գործեցիր մեծութիւն քեզ չի պիտի» եւ այլն:

Գրական ասպարեզ իջնելով Նարեկացուց, Ֆրիկից, Ներսես Շնորհալուց հետո՝ Նաղաշը կարողանում է պահպանել իր նախորդների ստեղծած ավանդները, ներկայացնել իր ժամանակի հասարակական-քաղաքական կյանքը, ժողովրդի սոցիալ-քաղաքական ծանր վիճակը, մարդկային ապրումներն ու ձգտումները:

Նաղաշը շատ հաճախ իր ստեղծագործությունների բովանդակությունն ու ձեւը աշխատել է նմանեցնել Նարեկացու բանաստեղծություններին: Օրինակ՝ Նարեկացուն հետեւելով՝ Նաղաշը նույնպես փորձել է «չ» տառի բաղաձայնույթով իր խոսքն ավելի երաժշտական դարձնել:

Նարեկացին գրում է *(Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Քրեստոմատիա, Եր., 2007, էջ 20)*.

Շուշան շաղով լցեալ,
շող-շաղով եւ շար մարգարտով...

Նաղաշը գրում է *(Մկրտիչ Նաղաշ, Տաղեր, էջ 105)*.

Ծաղկունք յայն ծաղկի սիրուն
Շաղ առիմ ու շողշողային...

Շարունակելի

Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1260-1375 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.

ԿԼԻԼԻԿԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

ԿԻԼԻԿՅԱՆ Հայաստանի՝ 1260–1375 թվականների պատմությունը հայոց պատմության ամենաբարդ եւ չպարզաբանված ժամանակաշրջաններից մեկն է: Սա Կիլիկիայի անկման ժամանակաշրջանն է, ուստի եւ հետաքրքիր են պատճառները, արքաների վարած արտաքին քաղաքականությունը, ինչու նրա հետ թշնամացան Եգիպտոսի մամլուքները, իսկ հետագայում՝ նաեւ թուրքմեն-կարամանները, ինչը, ի վերջո, կիլիկյան հայկական պետությունը տարավ կործանման:

Դեռեւս 13-րդ դարի 60–70-ական թվականների Մերձավոր Արեւելքի ռազմաքաղաքական իրադրությունը բնութագրվում էր բավականաչափ բարդ: Մոնղոլների գրոհի թափը թուլացել էր, նրանք մեծ ուժեր չէին կենտրոնացնում՝ մամլուքների դեմ պատերազմում հաղթելու համար: Փոխարենը Եգիպտոսի սուլթանությունն օր օրի հզորանում էր՝ դառնալով Մերձավոր Արեւելքի ռազմաքաղաքական ազդեցիկ ուժերից մեկը:

Մինչեւ 13-րդ դարի 70-ական թվականները հայ-մոնղոլական հարաբերությունները գտնվում էին բավական բարձր մակարդակի վրա: Կիլիկյան Հայաստանը եւ մոնղոլները միմյանց հետ կապված էին դաշնակցային կապերով, որոնք հաստատվել էին դեռեւս Հեթում թագավորի եւ Մանգու Մեծ խանի միջեւ՝ 1254 թվականին: Ինչ վերաբերում է Կիլիկյան Հայաստանի եւ Արեւմուտքի հարաբերություններին, ապա պետք է նշել, որ Կիլիկիայի հայերը գրեթե միշտ սերտ կապեր են ունեցել նրանց հետ:

Կիլիկիայի արտաքին քաղաքական դրությունը 13-րդ դարի 60-ական թվականների սկզբից բավականին բարդացավ: Դրան նպաստեց այն հանգամանքը, որ մոնղոլները, պատերազմելով Եգիպտոսի սուլթանության դեմ, պայքարի մեջ էին ներքաշում նաեւ Կիլիկիային: Այդ է վկայում մոնղոլների կողմից Եգիպտոսի սուլթանության դեմ հանդես եկող Կիլիկիայի հայերի ակտիվ մասնակցության փաստը: Օրինակ, երբ մոնղոլները որոշեցին գրավել Սիրիան (Ասորիքը), Հուլավու խանի պահանջով Հեթում արքան հսկայական բանակով մասնակցեց ռազմական գործողություններին: Պարզ է, որ Կիլիկիայի նման քաղաքականությունը պետք է զայրացներ մամլուքներին: Օրինակ, ըստ Հեթում պատմիչի, Եգիպտոսի սուլթանը որոշել էր կործանել Կիլիկիայի թագավորությունը:

Հայ-եգիպտական հարաբերությունների բարդացումը բացատրվում է նաեւ նրանով, որ Կիլիկյան Հայաստանը սերտ հարաբերությունների մեջ էր Արեւմուտքի եւ խաչակիրների հետ, ինչն էլ հանգեցնում էր հայ-եգիպտական հարբերությունների աստիճանական լարման: Հայ-եգիպտական հարաբերությունները պետք է քննակել նաեւ տնտեսական տեսանկյունից: Հայտնի է, որ Կիլիկիան գտնվում էր առեւտրական ճանապարհների խաչմերուկում, իսկ միջազգային առեւտրի մեջ Այաս քաղաքը Ալեքսանդրիայի հակառակորդն էր: Կիլիկիան այդ առեւտրին մասնակցում էր Տարսոնի հանքահորերի երկաթով, իր անտառների փայտով, բրդով, բամբակով եւ այլ ապրանքներով: Կարելի է ենթադրել, որ հենց առեւտրական մենաշնորհ ապահովելու համար էին Եգիպտոսի մամլուքները տարբեր պատրվակներով արշավում Կիլիկիայի վրա, ավերում քաղաքները եւ հատկապես՝ Այաս նավահանգիստը, որի գրավմամբ, փաստորեն, Եգիպտոսի սուլթանությանն անցավ Արեւելյան Ասիայի առեւտրի մենաշնորհը:

Վերոնշյալ փաստերը վկայում են, որ Կիլիկիայի հայկական թագավորության գրեթե ամբողջ պատմության ընթացքում նրա ամենավտանգավոր հակառակորդը եղել է Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը: Իրենց նպատակին հասնելու համար մամլուքները հայերի դեմ օգտագործում էին նաեւ փոքրասիական սելջուկների ուժերը: Հավատքի հարցում լինելով խիստ ուղղադավան՝ մամլուքներն առաջ էին քաշում ջիհադի՝ մոնղոլների եւ քրիստոնյաների դեմ սրբազան պատերազմի գաղափարը: Նման պայմաններում հայկական թագավորությունը պետք է կարողանար զգույշ եւ հեռատեսական արտաքին քաղաքականություն վարել՝ իր հզոր հարեւանների նկատմամբ:

Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ 13-րդ դարի 70-ական թվականների առաջին կեսը Կիլիկիայի համար խաղաղ է անցել, քանի որ 1268 թվականին կնքվել էր հայ-եգիպտական հաշտության պայմանագիրը: Սակայն, երեւում է, Կիլիկիային վիճակված չէր խաղաղ գոյատեւում, քանզի հետագա գործողությունները զարգանում են հակառակ նրան:

Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքական դրությունը 13-րդ դարի 80-ական թվականներին պայմանավորված էր այն փոփոխություններով, որ կատարվեցին Մերձավոր Արեւելքի միջազգային դրության մեջ: Մոնղոլների ահ ու սարսափ տարածող ուժը աստիճանաբար թուլանում էր, քանի որ ենթարկվում էր արտաքին թշնամիների արշավանքներին, իսկ Ոսկե Հորդայի դեմ պայքարը մեծ ծախսեր եւ ճիգեր էր պահանջում: Իշխանությունն սկսեց թուլանալ նաեւ այն պարզ պատճառով, որ նրա առանձին շրջաններում, սկսած 13-րդ դարի 80–90-ական թվականներից, ապստամբություններ բռնկվեցին: Այդ ժամանակվանից սկսած՝ հայ-մոնղոլական դաշինքն սկսեց թուլանալ եւ կորցնել իր նշանակությունը, որին մեծապես նպաստեց մի կարեւոր գործոն. մոնղոլները Ղազան խանի օրոք՝ 1295 թվականին, մահմեդականություն ընդունեցին: Չնայած դրան՝ Ղազանը բարեհաճ վերաբերմունք ուներ Կիլիկիայի նկատմամբ, որի մասին է վկայում Հեթումի այցը Ղազանին:

Հայ-մոնղոլական դաշինքը թեեւ իր վախճանն էր ապրում, բայց դեռ շարունակվում էր, եւ Ղազանի օրոք արձանագրվեցին ռազմական մի շարք հաջողություններ: Սակայն մեկ այլ վկայության համաձայն՝ Ղազանի օրոք ծանրացան հարկային լուծն ու կրոնական հալածանքները:

Շարունակությունը՝ էջ 8

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

(մարդու ստեղծումն ու ընտանիքի դերակատարությունը)

Բոլսվերտ Սխելտե Ադամս (1581–1659), «Սուրբ ընտանիք», ՀԱՊ

Սկիզբը՝ էջ 5

Մարդու ստեղծման որպիսությունը հասկանալ մեզ նույնքան անմատչելի է, որքան առհասարակ Աստուծո բոլոր ստեղծագործությունը, զի մենք արարած ենք եւ արարածական սահմանափակ միտք ունինք… Իսկ մեր հավատքի լույսը բաց է անում մեր մտքերն այսպես, որ մենք հոգով «ազգ ենք Աստուծոյ» (Գործք, ԺԷ 29), մինչդեռ մարմնով երկրից ենք, ուստիեւ միջնորդ ենք Աստուծո եւ բնության մեջ…» (Արշակ Տեր-Միքելյան «Քրիստոնեական»): Որովհետեւ մարդու ստեղծումն ի սկզբանե եւ միանգամայն որոշակի նպատակով ծրագրված իրողություն է: Այնքան կարեւոր եւ «անմատչելի», որքան որ ողջ արարչագործությունը. հանգամանք, որը կարող է նպատակաուղղել յուրաքանչյուրին՝ բավականաչափ խորությամբ եւ գիտակցված հավատքով անդրադառնալու իր արժեքին, կոչմանն ու առաքելությանը. *«Տէր Աստուած ասաց. «Լաւ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանութեամբ մի օգնական ստեղծենք նրա համար» (Ծննդ. 2. 18): երկնքի ու երկրի արարման ժամանակ արդեն սահմանված էր մարդու տնօրինությունը. «…Այն օրը, երբ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը… եւ մարդ չկար, որ մշակէր հողը, բայց աղբիւր էր բխում երկրից եւ ոռոգում ողջ երկիրը: Տէր Աստուած մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դէմքին կենդանութեան շունչ փչեց, եւ մարդն եղաւ կենդանի էակ» (Ծննդ. 2. 2, 4–6): Նույն կերպով սահմանված է նաեւ մասնավորապես կնոջ դերակատարությունը. «Մարդու ժառանգական բնական սերումն էլ պայմանավորված է կնոջով, որ ստեղծված է տղամարդին հավասար պատվով: Աստուծո հայտնությունը կատարելապես դյուրահասկանալի է դարձնում այդ հավասարությունը նոցա կողակցության գաղափարով, որ միեւնույն ժամանակ պարունակում է յուր մեջ հավասարության հիմնաքար միությունը (Ծննդ. 2. 21, Մատթ. 19. 4, Գործք, 17. 26): (Ըստ որում՝ կինը, տղամարդու կողակիցը լինելով, նորա հետ մեկ է եւ հավասար է, այսինքն՝ ոչ ոտիցն է, որ ստրուկ լինի, ոչ գլխիցն է, որ գլխավոր լինի, եւ ոչ էլ այլուստ է, որ օտար լինի, այլ սիրալիր օգնական է: Սակայն կինը, ըստ տղամարդի հառաջնության (Ծննդ. 2. 21) եւ ըստ յուր դյուրախաբության (3. 7–16), նորա տիրության պետք է զիջանի, միայն թե սիրո սկզբունքի հիման վրա, ինչպես հակիրճ արտահայտում է ավետարանիչը. «Իւրաքանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ իբրեւ զիւր անձն, եւ կին երկնչիցի յառնէ իւրմէ» (Եփ. 5. 33)…* (Արշակ Տեր-Միքելյան «Քրիստոնեական»):

Ընդսմին, աստվածային օրինաբեր ներկայության մեջ անթաքուցանելի են թե՛ «Ադամի» բնական փափագն ու անդրադարձը եւ թե՛ *«մեկ դարձած երկուսի»* համատեղ երջանիկ ապրումը. «Ադամն ասաց. *«Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչուի կին, որովհետեւ իր ամուսնուց ստեղծուեց»: «…Աստուած օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցէք, բազմացէք, լցէք երկիրը, տիրեցէք դրան, իշխեցէք… բայց բարու եւ չարի գիտութեան ծառից մի՛ կերէք, որովհետեւ այն օրը, երբ ուտէք դրանից, մահկանացու կը դառնաք» (Ծննդ. 1. 22, 27–28, 2. 17): «Տէր Աստուած Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց եւ նրան բերեց Ադամի մօտ… Այդ իսկ պատճառով տղամարդը, թողնելով իր հօրն ու մօրը, պէտք է միանայ իր կնոջը, եւ երկուսը պէտք է լինեն մի մարմին» (Ծննդ 2. 22, 24)»:* Աստվածաշունչը միանգամայն հստակ եւ որոշակի ներկայացնում է թե՛ տղամարդու եւ թե՛ կնոջ գործառույթների ամբողջությունը, ինչն առավել ակնհայտ կերպով երեւան է գալիս այն ժամանակ, երբ, Քրիստոսի եւ Իր Եկեղեցու միության օրինակի նման, աստվածային օրինությամբ երկուսը խորհրդավորապես միանում են՝ մշտական կենակցության ուխտի մեջ մտնելով եւ ստանձնելով գործակցել հանուն Աստծո արքայության եւ նրա բաղկացուցիչ մաս հանդիսացող ընտանիքը կազմելուն: ***«Մարդու ժառանգական բնական սերումն էլ պայմանավորված է կնոջով, որ ստեղծված է տղամարդին հավասար պատվով: Աստուծո հայտնությունը կատարելապես դյուրահասկանալի է դարձնում այդ հավասարությունը նոցա կողակցության գաղափարով, որ միեւնույն ժամանակ պարունակում է յուր մեջ հավասարության հիմնաքար միությունը (Ծննդ., 2. 21, Մատթ. 19. 4, Գործք. 17. 26)***: Ամեն անգամ, երբ տղամարդը, բաժանվելով իր հայրական ընտանիքից, սուրբ Խորհրդով նոր ընտանիք է կազմում, «երկուսը մի մարմին են դառնում» *(Ծննդ Բ 22, 24)*, մի նոր ընտանիք է ձեւավորվում երկնային արքայության մեջ *(Ա Տիմ. Դ 1–8. Եբր.ԺԳ 4). «Այո՛, ամուսնութեան բուն օրէնքը բնական սէրն է, որ մարդուն բնութենէն անբաժանելի է: Բնական սէրն հաւասար է նաեւ ամէն թռչնոց եւ անասնոց առանց ամուսնական պայմանիի՝ որ միմիայն ազատ մարդոյն համար է: Բնական սէրն է միայն բոլոր բնութեանց կենդանատու հոգին եւ զօրութիւն. եթէ չը կենդանացնէ սէրը՝ բնութիւնը կը մեռնի, ոչ մայր կը ծնանի եւ իր զաւակին կաթ կուտայ, ոչ հաւ, ոչ ճնճղուկ ձագեր կը հանեն եւ կուտ տալով կը սնուցանեն» (Խրիմեան Մկրտիչ, «Դրախտի ընտանիք»):* Ինչպես տեսանելի է «Հայոց հայրիկի» ձեւակերպումներից, ամուսնությունը բնական սիրո արդյունք է, ավելին՝ ողջ աշխարհն ու կենդանական աշխարհն է հիմնված սիրո օրենքի վրա: Մարդու ազատ կամքով պայմանավորված՝ առանց սիրո եւ առանց ամուսնության, այլ խոսքով՝ առանց աստվածային օրինության չի կարող ձեւավորվել ընտանիք:

Շարունակելի

Իսահակ վրդ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1260–1375 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ԿԼԻԼԻԿԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

Սկիզբը՝ էջ 7

Ինչեւէ, հայ-մոնղոլական դաշինքը պայթելու էր ոչ այնքան Ղազան խանի մահվան, որքան մոնղոլական իշխանության ներսում ծայր առած տնտեսական-քաղաքական ճգնաժամի, գահակալական երկպառակությունների պատճառով: Հայ-մոնղոլական զինակցությունը անփառունակ վախճան ունեցավ: Չունենալով այլեւս մոնղոլների պես հզոր դաշնակից՝ Կիլիկիան եգիպտոսի սուլթանության դեմ պայքարում մնաց մեն-մենակ եւ ստիպված էր ապավինել սեփական ուժերին:

Ինչ վերաբերում է Արեւմուտքին, ապա եվրոպական պետությունների հարաբերությունները էլ բավականաչափ սրված էին, եւ խաչակրաց նոր արշավանքներ չէին ակնկալվում: Եվրոպական երկրները եւ Հռոմի պապը իրական օգնության փոխարեն ավելի շատ ձգտում էին ընդարձակել իրենց ազդեցության ոլորտները Կիլիկիայում եւ նամակներ առաքելով ու ֆինանսական չնչին օժանդակություններ ցուցաբերելով՝ լուծել իրենց հուզող քաղաքական եւ տնտեսական հարցերը:

Մերձավոր Արեւելքի խաչակրաց պետությունները վաղուց հեռացել էին պատմության թատերաբեմից՝ բացառությամբ Կիպրոսի, որն էլ այնքան հզոր չէր, որ կարողանար իրական ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային: Մինչդեռ այս նույն ժամանակահատվածում իրենց ուժերի ծաղկման շրջանում էին գտնվում Կիլիկիայի գլխավոր հակառակորդները՝ եգիպտոսի մամլուքները, որոնք օրեցօր հզորանում էին՝ դառնալով տարածաշրջանի ազդեցիկ ուժերից մեկը: Պակաս վտանգավոր չէին նաեւ նրանց դաշնակիցները՝ թուրք-սելջուկները՝ արեւելքում, եւ թուրքմեն-կարամանները՝ հյուսիսում, որոնք առաջացել էին Իկոնիայի սուլթանության տարածքում: Փաստորեն, Կիլիկիան երեք կողմից շրջապատված էր թշնամիներով, իսկ չորրորդ կողմով սահմանակից էր Միջերկրական ծովին: Ստեղծված պայմաններում, շրջապատված լինելով հզոր եւ ոխերիմ թշնամիներով, դժվար չէ ենթադրել, որ Կիլիկիայի կործանումն ընդամենը ժամանակի հարց էր:

14-րդ դարի 60–70-ական թվականները Կիլիկիայի հայկական թագավորության գոյամարտի տարիներն էին: Այդ մեկուկես տասնամյակի ընթացքում երկրի կեսից ավելին հայտնվեց եգիպտոսի մամլուքյան սուլթանության տիրապետության ներքո, եւ հայոց թագավորությունն ամփոփվել էր Լեռնային Կիլիկիայի տարածքի մի մասում: Պատահական չէ, որ մարոկացի հայտնի ճանապարհորդ Իբն Բատուտան նշում է, թե այդ ժամանակ հայոց թագավորությունը ստորակա կախվածության մեջ էր եգիպտոսի սուլթանությունից:

14-րդ դարի կեսերից սկսած՝ ի վնաս Կիլիկյան Հայաստանի, կտրուկ կերպով բարդացավ Արեւմտյան Եվրոպայի քաղաքական իրավիճակը: Շարունակվում էր հարյուրամյա պատերազմը արեւմտաեվրապական գերհզոր տերությունների՝ Անգլիայի եւ Ֆրանսիայի միջեւ, որը երկրորդական պլան մղեց խաչակրաց նոր արշավանքի ծրագրերը: Միջազգային ասպարեզում կատարված տեղաշարժերը հիմք դարձան, որ եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը եւ թուրքմեն-կարամանները սեւեռուն ուշադրություն հատկացնեն Կիլիկիայի հայկական թագավորության եւ Կիպրոսի դեմ պայքարին՝ վերսկսելով իրենց ավերիչ արշավանքները: Նման պայմաններում Կիլիկիային անհրաժեշտ էր ոչ միայն ռազմական, այլ նաեւ ֆինանսական օժանդակություն՝ տնտեսական կարիքները հոգալու համար: Բնակչությունը տառապում էր սովից եւ այն ժամանակ լայն տարածում գտած սեւ ժանտախտից: Չկար սննդի մատակարարում ոչ բնակչությանը, ոչ առավել եւս՝ բանակին: Կիլիկիան դատապարտված էր կործանման: Վարդան Արեւելցին վկայում է, որ Կոստանդին կաթողիկոսն այնքան էր վշտացած «մեղսաբեր եւ ցասմնաբեր» դարի վերաբերմունքից իր ազգի նկատմամբ, որ անխնա վաճառում էր եկեղեցական գանձերը՝ ձգտելով փոքր-ինչ գոնե կարեկից լինել ժողովրդին: Մոտ ութ տարի Սսի դաշտերը թշնամիների ասպատակությունների հետեւանքով մնացել էին անմշակ:

Ահա այսպիսի ծանր վիճակում էր գտնվում Կիլիկյան Հայաստանը 14-րդ դարի 60-ական թվականների երկրորդ կեսին եւ իր անկման նախօրյակին, որը շարունակվեց մինչեւ 1375 թվականը, երբ թշնամու բանակը գրավեց Սիսը, եւ վերացվեց հայոց թագավորությունը:

Սսի գրավմամբ եւ Կիլիկիայի հայկական թագավորության վերացմամբ համաշխարհային պատմության ասպարեզից հեռացավ հայկական եւս մի թագավորություն, որին վիճակված էր գոյատեւել ընդամենը երեք հարյուրամյակ:

Արաբ պատմագիրները մեծ ուրախությամբ են արձանագրում Սսի անկման լուրը: Նրանցից մեկը նշում է. «1375 թվականին Կիլիկիայի մայրաքաղաք Սիսը, եռամսյա պաշարումից հետո, գրավվեց Հալեպի էմիր Իշիկ-Թեմուրի կողմից, եւ հայ իշխանների տերությունն այնտեղ լիովին վերացավ... Այս մասին լուրը հասավ սուլթան Մելիք-Աշրաֆին, որը լցված էր երջանկությամբ այդ մեծ հաղթանակի առթիվ»:

Հայ պատմիչներն այդ դեպքն իրավացիորեն դիտում են որպես հայ պետականության վախճան: Իսկ Միքայել Չամչյանը նշում է, որ Լեւոն արքայի եւ Մարիամ թագուհու մահով հայոց ազգից հեռացավ նաեւ թագավորության հիշատակումը, որ հայտնի դարձավ որպես Կիլիկիա, բայց եւ անծանոթ դարձավ ոչ միայն հայոց ազգին, այլ նաեւ հետագա սերունդներին, թե եղել է երբեւէ, որ ունեցել են թագավոր այլ ցեղից կամ բնիկ հայկազյան, նախարարական տներից Արշակունյաց, Բագրատունյաց կամ Ռուբինյանց, քանզի ոչ միայն իշխանությունը վերացավ, այլ նաեւ երկիրը բնակչությունից ամայացավ: Եվ չմնաց մեր թագավորներից ոչ մի հետք, ոչ մի ստվեր նրանց բնակավայրերից, եթե ոչ՝ միայն մի քանի եկեղեցական խարխուլ շինություններ, պարիսպներ ու կամուրջներ, մի քանի դրամներ ոսկուց եւ արծաթից, որոնք մինչեւ այժմ պահպանվում են՝ հայերեն գրված, որոնց մի կողմին առյուծի կերպարն է փորագրված, իսկ մյուս կողմին արքայի պատկերն է՝ կամ առանձին, կամ՝ թագուհու հետ միասին, իսկ որոշների վրա էլ խաչ է պատկերված:

Իհարկե, 1375 թվականին Կիլիկիայի հայկական թագավորությունը դադարում է գոյություն ունենալուց: Սակայն... հայոց թագավորությունը, եւ ոչ թե Կիլիկիայի հայ ազգաբնակչությունը, եւ ոչ թե նրա թողած մշակութային հարուստ ժառանգությունը, եւ ոչ, թեկուզ, վերոնշյալ «մի քանի եկեղեցական խարխուլ շինությունները», պարիսպներն ու կամուրջները, դրամները, որոնք մշտապես հիշեցնելու են Կիլիկիայի գոյության մասին ոչ միայն մեզ՝ հայերիս, այլ նաեւ համաշխարհային հանրությանը: Նրա 300-ամյա գոյությունը, այն ժամանակ, երբ մայր հայրենիքում հայերը մեծամասամբ զրկված էին պետականությունից, հայ ժողովրդի անկախության ձգտման եւ շինարար գործունեության փառավոր ապացույցը եւ հաստատումը եղավ:

Այսպիսով, ուսումնասիրելով պատմական փաստերը, վերլուծելով ներքին եւ արտաքին քաղաքական իրադարձությունները, հստակ կարող ենք ասել, որ Կիլիկիայի հայկական թագավորության անկման գլխավոր պատճառներն էին ֆեոդալների կենտրոնախույս ձգտումների ուժեղացումը, մամլուքների ավերիչ արշավանքները, գյուղացիների սնանկացումը, առեւտրի եւ արհեստների անկումը, Սիրիայի համար մղվող պայքարը մոնղոլների ու մամլուքների միջեւ, հայ-եգիպտական հարաբերությունների կարգավորման խնդրում պապական դիվանագիտության միջնորդությունը, խաչակրաց արշավանքները, որոնց ժամանակ Կիլիկիան դառնալու էր ռազմական գործողությունների հենակետն ու զորավիգը, իշխող վերնախավի արեւմտամետ կործանարար քաղաքականությունը: Ավելացնենք եւս երկու հավելյալ պատճառ: Նախ այն, որ եգիպտոսի սուլթանության ռազմական ուժերը շատ ավելի մեծաթիվ էին եւ լավ կազմակերպված, քան հայկականը, ապա՝ մոնղոլները եւ եվրոպական երկրներից եւ ոչ մեկը չօգնեցին Կիլիկային, ինչը մինչեւ վերջին պահն ակնկալում էին կիլիկյան թագավորները: Երկիրը հարկադրված էր մեն-մենակ մաքառել եգիպտական մամլուքների, կարամանյան թուրքմենների եւ նրանց դաշնակիցների դեմ, եւ որքան էլ երկարատեւ ու հերոսական լիներ նրա ինքնապահպանման գոյամարտը, նրա պաշտպանները հյուծվեցին, թուլացան եւ հարկադրված եղան տեղի տալ ոսոխների՝ մի քանի անգամ գերակշիռ ուժերի առջեւ:

Կիլիկիայի հայկական թագավորության անկմամբ փակվեց հայ ժողովրդի պետական գոյության եւս մի նշանավոր էջ: Հայ ժողովրդին, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, երկար դարերով բաժին ընկավ օտարի լուծը, տնտեսական, քաղաքական եւ մշակութային դարավոր անկումը:

Անուշ ԱՂԱՍԱՐՅԱՆ

Երեւանի հիմնադիր Արգիշտի արքայի, Ռուսա 2-րդ Հայոդու եւ հարակից հարցերի մասին

Սկիզբը՝ էջ 5, 6

Ի դեպ, պետք է հարգանք ունենալ Սալվինիի հանդեպ, որը Ռուսա III-ի՝ իր հայտնագործած արձանագրությունը ներկայացնում է իտալացի հայրենակիցներին հայերիս նկատմամբ հարգալից վերնագրով՝ «Una Stele di Rusa III Erimenahi dalla zona di Van» – «Մի կոթող Ռուսա III Էրիմենահի-ի՝ Վանի շրջակայքից»՝ հիշատակելով գյուղի հին հայկական Էրմանց կամ Էրմանիս անունը, մինչդեռ Գրեկյանը արձանագրությունը վերնագրում է գյուղի թուրքերեն անունով՝ «Գյովելեքի ուրարտական արձանագրությունը», ինչը կարող էր, բայց չի արել Միրիո Սալվինին:

Ի վերջո, Ադրբեջանի նախագահ Ալիեւին հիշատակելուս առթիվ Գրեկյանը վախեցած հայտարարում է, իբր քիչ է մնում ես իրեն մեղադրեմ, թե. «Երվանդ Գրեկյանը ջուր է լցնում ադրբեջանական ջրաղացին»: Թեեւ «Գյովելեքը» ես չեմ համարում թուրքական ջրաղացին ջուր լցնել, բայց, ինչպես գյուղացու հայտնի առածն է ասում, մկան մեզն օգուտ է ջաղացին: Եվ ուրեմն, ջաղացին ջուր լցնելը էլ ինչպե՞ս է լինում:

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 13.06.2019 թ.
Տպաքանակը՝ 1175